№ 51 ԵՐԵՔՇԱԲԹԻ, 10 ՄԱՐՏԻ

1915
ՔԱՌԱՍՈՒՆՉՈՐՐՈՐԴ ՏԱՐԻ

ԵՐԵՔՇԱԲԹԻ, 10 ՄԱՐՏԻ № 51

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը
և 7 ամսվանը 6 րուբլի. ամսական 85 կոպ.
Առանձին համարները ԱՄԷՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ»
Соломоновская ул., № 21.
Tiflis, Rédaction „Mschak"
Խմբագրատան տելեֆօն № 2—53

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2
(բացի կիրակի և տօն օրերից)
Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզվով
Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 20—10 կոպ.
Տպարանի տելեֆօն № 67.

ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ
ՄՇԱԿ
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ
ՆԵՐԿԱՅ 1915 Թ. ՀԱՄԱՐ
(ԽԴ-ՐԴ ՏԱՐԻ)
ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆՆ Է՝

12 և 11 ամիսը	10 ամիսը	9 ամիսը	8 ամիսը	7 և 6 ամիսը	5 ամիսը	4 ամիսը	3 ամիսը	2 ամիսը
10 ռուբ.	9 ռուբ.	8 ռուբ.	7 ռուբ.	6 ռուբ.	5 ռուբ.	4 ռուբ.	3 ռուբ.	2 ռուբ.

Մարտի 1-ից մինչև ապրիլի 1-ը 85 կոպ.

Ամերիկայի բաժանորդները պիտի վճարեն տարեկան 6 դոլլար. Եւրոպայի բաժանորդները՝ 32 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները՝ 10 ռուբլի, Թիւրքիայի բաժանորդները՝ 120 ղրուշ։

Յայտարարութիւններ ընդունվում են բոլոր լեզուներով։ Յայտարարութիւնների համար պիտի վճարել՝ առաջին երեսի վրա տողատեղին (պետիտ) 20 կ., վերջին երեսի վրա 10 կոպէկ։ Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաև հին հասցէն և 40 կոպ. նամականիշ։

Պրեմիաներ «ՄՇԱԿԻ» տարեկան բաժանորդները, որոնք 1915 թ. ընթացքում լրիւ վճարած կլինեն 10 ր. բաժանորդավճարը կը ստանան որպէս պրեմիա հետևեալ նոր լոյս տեսնելիք գրքերը. 1) «Ծանշվածը»—մեծ վէպ Շահրիարի հայկ. յեղափոխ. կեանքից, 2) «Հայկական հարցը»—լուսաբանված դոկումենտներով։

Մեր հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ» Արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅՈՑ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
ԱՐՏԻՍՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԴԱՀԼԻՃՈՒՄ
Երեքշաբթի, մարտի 10-ին
ԿԸ ԿԱՅԱՆԱՅ
ՀԱՄԵՐԳ
Բարեհաճ մասնակցութեամբ՝
տ. տ. Ե. Դ. ԱՓՐԻԿԵԱՆԻ, Ե. Դ. ՄԱՅՍՈՒՐԵԱՆԻ
յայտնի դաշնակահարուհի ՄԱՐԳԱՐԻՏ ՄԻՐԻՄԱՆԵԱՆԻ
ջութակահարուհի օր. ՄԻՐԻՄԱՆԵԱՆԻ, ***-ի, պ. պ. ՏԻԳՐԱՆ ՆԱԼԲԱՆԴԵԱՆԻ, ՄՈՒՇԵՂ ԱՂԱՅԵԱՆԻ և Ներսիսեան դպ.-ի խառն խմբի՝ ղեկավարութեամբ պ. ՍՊԻՐԻԴՈՆ ՄԵԼԻՔԵԱՆԻ
Զուտ արդիւնքի 50%-ը
Յօգուտ փախստականների
Տոմսակները նախօրոք վաճառվում են Սուքիասեանի երաժշտական խանութում։ Սկիզբն է երեկոյեան ժամը 8½-ին։ Ընկերութեան անդամների մուտքը ձրի է։
(ա. օ.) տն. 132. 2—2

Въ Залѣ Императ. Музыкальнаго Училища
(Грибоѣдовская, 8)
Въ четвергъ, 12 марта
Док.-фил. СЕДРАКЪ ТАРАЯНЪ
прочтетъ лекцію на русскомъ языкѣ на тему:
Призваніе Человѣка
По слѣдующей программѣ:
1) Мѣсто человѣка въ природѣ.
2) Жажда знанія и исканіе истины.
3) Творческій талантъ человѣка.
4) Природа—какъ неисчерпаемый источникъ блага.
5) Физическія силы и животныя способности человѣка ограничены и недостаточны.
6) Благополучіе человѣка есть результатъ его творческаго труда.
7) Недостаточное проникновеніе человѣка въ сокровищницу природы.
8) Слабость самопознанія человѣка и игнорированіе имъ своихъ творческихъ силъ.
9) Банкротство западно-европейской педагогіи, науки и искусствъ.
10) Пробужденіе творческаго генія путемъ истиннаго нравственно-просвѣтительнаго воспитанія (оздоровленіе наукъ и искусствъ).
Послѣ лекціи лекторъ отвѣтитъ на вопросы, заданные ему слушателями относительно главныхъ его тезисовъ.
Цѣны мѣстамъ отъ 20 к. до 1 руб. — Начало въ 7½ ч. веч.
Билеты можно получить у швейцара Музыкальнаго Училища, и въ книжномъ магазинѣ «Просвѣщеніе», (Головинск. пр., подъ Тифлисск. Собраніемъ). Программа выдается безплатно.
(ա. օ.) տն. 142. 3—1

ԱՐՔՈՒՆԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ
ԲԱԳՈՒԻ ՀԱՅ ԴԵՐԱՍԱՆԱԿԱՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԻՒՆ
Պօղոս Յովհաննիսեան ԱՄԻՐԱԳՕԻ տնօրինութեան ներքոյ
1915 Զատկի տօներին մարտի 23-ից մինչև ապրիլի 2-ը։
ԹԱՏԵՐԱՇՐՋԱՆ
ՍԵՆՍԱՑԻՈՆ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ
Բոլորն էլ առաջին անգամ Թիֆլիսում։
ԲԱՑԱՌԻԿ ԲԵՄԱԴՐՈՒԹԵԱՄԲ ներկայ անսամբլով գրված այս պիէսները Բագւում անցել են մի շարք անշլագներով։ Անսամբլը կազմված է հետևեալ դերասաններից. (Այբուբենական կարգով) օր. Աբրահամեան, տ. տ. Արաքս, Անահիտ, Գուլազեան, Դուրեան-Արմէնեան, Մարգօ, Սիրուշ, Սաթենիկ, պ. պ. Մ. Ալիխանեան, Ա. Արմէնեան, Ասլեան, Գարագաշ, Զարիֆեան, Լաքա, Ղազարեան, Ստեփանեան, Օվի-Անարոնեան, Հայկ։ Գլխաւոր ռէժիսեօր՝ Ա. Արմէնեան։ ՌԵՊԵՐՏՈՒԱՐ (որոշված օրերով)
Երկուշաբթի՝ 23 և չորեքշաբթի՝ 25 մարտի **Մելիքի աղջիկը** Ղարաբաղի մելիքների կեանքից։ Հինգշաբթի, 26 մարտի **ԱԻ ԶԱՄ** ֆրանս-պրուսական պատերազմից։ Ուրբաթ 27 մարտի 1) **ՍՈՒԶԱՆՆԱԻ** 2) **ՄԱՀԸ** Ծովային և ներկայ պատերազմից։ Շաբաթ, 28 մարտի **ԽԵՆԹԸ** ռուս-թիւրքական պատերազմից։ Կիրակի 29 մարտի **ԽԱՉԱԳՈՂՆԵՐ** յայտնի «Խաչագողի» յիշատակարանից։ Երաժշտութիւն հայկական և եւրոպական հեղ. Ա. Մայիլեանի։ Յատուկ զգեստներ, ակսեսուար և դեկորացիաներ։ Մանրամասնութիւնները առանձին աֆիշներով։ Տեղերի գները սովորական են։ Տոմսակների վաճառումը սկսված է։
տն. 140. 1—1

ԲԺԻՇԿ
Շուշանիկ Նաքաշեան
(Մասնագէտ կանանց հիւանդութիւնների եւ մանկաբարձութեան)։
Ընդունում է հիւանդներին՝ (առ. ժ. 12½—2. (եր. ժ. 4—6.
Հասցէն՝ Սոլոլակ, Բոլշչևսկայա փ. № 1
Հեռախօս 10—58։
(Ե.հ.կ.) տն. 784. 100—75

ԲԺԻՇԿ
Գ. ՄԱՂԱՔԵԱՆ
վերսկսեց հիւանդների ընդունելութիւնը՝ երեկոյեան ժամը 5—7-ը։
Բեբութովսկայա փող. № 38. Հեռ. 3—88.
(ա. օ.) տն. 139. 3—1

„ՄՇԱԿԻ" ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ
Վաճառվում են հետևեալ հրատարակութիւններից

1) ՄԱՆՐԱՆԿԱՐՆԵՐ, Վրթնի, I և II հատորներ	1 ռ.	50 կ.
2) ՄԻ ԱՄԻՍ ԱՐԵՒԵԼՔՈՒՄ, Հ. Առաքելեանի		40 կ.
3) ՀԱՅԿԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ, Լէօի, հատոր I, երկրորդ տպ.	1 ռ.	20 կ.
4) ԴԷՊԻ ԱՐԱՐԱՏ, Արշ. Մխիթարեանի		40 կ.
5) ԱՐԲԵՑՈՂՈՒԹԵԱՆ ԴԷՄ		15 կ.
6) ՁԵՌՆԱՐԿ տրամաբանութեան, հոգեբանութեան, բանահիւսութեան, Հ. Առաքելեանի		50 կ.
7) ԿԵՐՈՆՆԵՐ, բանաստեղծ. հաւաքածու, Վ. Մալէզեանի	1 ռ.	
8) ՅՈՒՇԱՐՁԱՆ ողբացեալ Արփիար Արփիարեանի		40 կ.
9) ՄԻ ՀՆՁԻՒՆԻՆ ՄԻ ԳԻՐ (վեվագրութիւն), Ստ. Մալխասեանցի		40 կ.
10) ԸՆԿԵՐՎԱՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՀԱՅ ԸՆԿԵՐՎԱՐԱԿԱՆՆԵՐ, Մուշեղ եպիսկոպոսի		35 կ.
11) ՃՈՐՏԵՐԻ ԱԶԱՏԱԳՐՈՒԹԵԱՆ ՅԻՍՆԱՄԵԱԿԸ, նկարներով		15 կ.
12) ԱՆԳԼԻԱՅԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԵԱՆՔԸ, Թարգմ. Մ.-ի		15 կ.
13) ՄԻԼՏՕՆԻ ԿԵԱՆՔԸ եւ գրական գործունէութիւնը, Հ. Առաքելեանի		30 կ.
14) ԳԱԼԻԼԷՅԻ ԿԵԱՆՔԸ եւ գիտական գործունէութիւնը, Հ. Առաքելեանի		25 կ.
15) ԱՍՏՈՒԱԾԱՅԻՆ ՀՐԱՀԱՆԳ ՀԱՆՐԱՊԱՐՏՈՒԹ, Մակ. եպ. Բարխուդարեանի		80 կ.
16) ԳՐԻԳՈՐ ՕՏԵԱՆ.	1 ռ.	50 կ.
17) ԽԱՂԱՂԱՍԻՐԱԿԱՆ ՊԱՏԱՆԵԿԱԿԱՆ ԳԻՐՔ. Արթիւր Միւլլէրի, Թարգմ. Իս. Յարութիւնեանի.		40 կ.
18) ՓԱՐԱՒՈՆՆ ՈՒ ՀԱՆՃԱՐԸ, Աւ. Եզեկեանի.		15 կ.
19) ОТВѢТЪ АРХІЕПИСКОПА МЕЛХИСЕТЕКА МУРАДЬЯНА НА ПОСЛАНІЕ РИМСКАГО ПАПЫ ЛЬВА XIII.		20 կ.
20) ՏՈՒԲԵՐԿՈՒԼՕԶԸ, ԹՈՔԱԽՏԸ ԵՒ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ, բժ. Արտ. Շխեանի		20 կ.
21) ТУБЕРКУЛОЗЪ, ЧАХОТКА и ОБЩЕСТВО, բժ. Արտ. Շխեանի.		25 կ.
22) ՀԱՅ-ՎՐԱՑԱԿԱՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՊՐՕԲԼԵՄԸ, Բ. Իշխանեանի		20 կ.
23) ՌՈՒՍԱԿԱՆ ՎԱՆՔԵՐԸ ՖԻՆԼԱՆԴԻԱՅՈՒՄ, Գ. Տէր-Ռուբինեանցի		10 կ.
24) ԱԶԳԱՅԻՆ ԵՐԿՈՒ ՄԵԾՈՒԹԻՒՆՆԵՐ, Գ. Չթենցի		3 կ.

Նրանք, որոնք յիշեալ գրքերից մի-մի օրինակ կը պահանջեն մեզանից՝ փողը կանխիկ ուղարկելով, կը ստանան 30% զեղչ և ճանապարհածախսը մեզ վրա։ Վերադիր վճարով պահանջողներին զեղչ կը լինի միայն 25%։ (6) 0—2

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄ

ՊԱՏԵՐԱԶՄ ԹԻՒՐՔԻԱՅԻ ԴԷՄ

ՌՈՒՍ-ԹԻՒՐՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

(Պետ. Հեռ. Գործ.)

7 մարտի

ԹԻՖԼԻՍ.—Պաշտօնական։ Կովկասեան զօրաբանակի շտաբի կողմից.

Մարտի 6-ին ճորոխի ուղղութեամբ մեր թնդանօթաձիգ ու հետևոտն գնդերը աջողութեամբ խափանեցին թիւրքերի փորձերը, որոնք կամենում էին անցնել մեր գրաւած դիրքերը։

Օլթիի ուղղութեամբ մեր առաջապահ զօրամասերը աջողութեամբ առաջացել են, փախուստի դարձնելով թիւրք ասկեարներին և հրոսակախմբերին։

Մնացած ուղղութեամբ ընդհարումներ չեղան։

8 մարտի

ԹԻՖԼԻՍ.—Պաշտօնական։ Կովկասեան զօրաբանակի շտաբի կողմից.

Մարտի 7-ին մեր զօրքերն աջողութեամբ վանեցին թիւրքերին, որոնք փորձում էին ծովափի շրջանում յարձակման դիմել։

Ճորոխում թիւրքերը կռւից յետոյ վանվեցին դէպի Արդուին։

Արդանուշի և Օլթիի միջև թիւրքերի զօրամասերը բաւականաչափ ետ են մղված դէպի արևմուտք։

Ալաշկերտի հովտում նոյնպէս ընդհարում տեղի ունեցաւ մեր և թիւրք զօրքերի միջև, ըստ որում մեր զօրքերը կռւով գրաւեցին 2 կարևոր կէտ, փախուստի դարձնելով թիւրքերին։

ԱՆԳԼՕ-ԹԻՒՐՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

(Պետ. Հեռ. Գործ.)

8 մարտի

ԼՈՆԴՈՆ.—Կահիրէից հաղորդում են, որ, ըստ հետախոյզ զօրախմբերի, թշնամու առաջապահ զօրագնդերը մնում են Սուէզի ջրանցքից 4 անցք հեռու և սակաւ գործունէութիւն են ցոյց տալիս։

ԴԱՐԴԱՆԵԼԻ ՌՄԲԱԿՈԾՈՒԹԻՒՆԸ

(Պետ. Հեռ. Գործ.)

7 մարտի

ՊԱՐԻԶ. — Ծովային մինիստրութիւնը յայտնում է.

Մարտի 5-ին Դարդանէլում գործողութիւնների ժամանակ դաշնակիցների ծովային ույժերը ենթարկվեցին չափազանց ուժեղ թնդանօթային կրակի։ Մի քանի ռազմանաւ կպան լողացող ականների նեղուցի մէջ։ Ֆրանսիական և անգլիական ռազմանաւերը ուժեղ ռմբակոծութեան ենթարկեցին Կիլիդբահր, Ջանակ-Կալէսի, Սուանդերէ, Դարդանոս բերդերը և Կաֆէզ հրուանդանը։ Այդ տաք կռւի ժամանակ ձեռք բերած հետևանքները շատ թանգ նստեցին դաշնակիցներին, այսպէս՝ «Բուվէ» զրահանաւը ջրասուզվեց ականների պայթումից, իսկ «Գօլուա» ժամանակաւորապէս հեռացաւ կռւից թշնամու կրակից ստացած վնասուածքների պատճառով։ Անգլիական նաւատորմը նոյնպէս կորուստներ ունեցաւ. Նրա երկու ականանաւ ջրասուզվեցին։ Սակայն, որքան էլ որ ծանր լինէին այդ կորուստները, նրանք չեն կանգնեցնի պատերազմական գործողութիւնների ընթացքը։

Հէնց որ տեղեկութիւն ստացվեց «Բուվէ» զրահանաւի հետ տեղի ունեցած պատահարի մասին, ծովային մինիստրը հեռագրեց «Անրի Կատր» զրահանաւի հրամանատարին, որ գտնվում էր Սիրիայի ափերի մօտ, բռնել «Բուվէի» տեղը։

Դեռ տեղեկութիւններ չը կան «Բուվէի» նաւաստիների մասին։ Մի քանի տեղեկութիւն հնարաւորութիւն են տալիս ենթադրելու, որ նաւաստիների մի մասը, որի քանակը դեռ պարզված չէ, ազատված է։

ԼՈՆԴՈՆ.—Ծովակալութիւնը հաղորդում է.

Նրանից յետոյ, երբ վերջին 10 օրը դաշնակիցների ծովային ույժերը անդադրում որսում էին ականներ նեղուցների ներսում, մարտի 5-ին, առ. ժամը 10 ու 45 ր. անգլիական և ֆրանսիական նաւատորմերը սկըսեցին ընդհանուր ռմբակոծութիւնը Դարդանէլի նեղ անցքի ամրութիւնների դէմ։ «Կվին-Ելիզաբէթ», «Ինֆլէկսիբլ», «Ագամեմնօն» և «Լորդ-Նէլսօն» ռմբակոծեցին Կիլիդ-բահր և Ջանակ-Կալէ բերդերը այն ժամանակ, երբ «Տրիումֆը» և «Պրինս-Ջորջը» կրակ բացին Դարդանոս ամրութեան մարտկոցների վրա։ Թշնամու գաուբիցները և դաշտային թնդանօթները ուժեղ կրակ բացին մեր ռազմանաւերի վրա։

Ժամը 12 ու 22 ր. ֆրանսիական նաւատորմը, բաղկացած «Սուֆրէն», «Գօլուա», «Շարլէման» և «Բուվէ» ռազմանաւերից, առաջացաւ դէպի նեղուցները և ռմբակոծեց բերդերը մօտիկ տարածութիւնից։ Կիլիդբահր և Նամազիէ բերդերը պատասխանեցին ուժեղ կրակով, սակայն նրանք լռեցին նեղուցների ներսում գտնվող 10 ռազմանաւերի կրակից։

Ժամը 1 ու 25 ր. ցերեկվայ բոլոր բերդերը դադարեցին կրակելուց։ Այն ժամանակ «Վենջէնց» «Իրէզիստիբլը», «Ալբիօն», «Օշէն», «Սվիֆտշուր» և «Մաջէստիկ» զրահանաւերը մօտեցան, որպէսզի փոխարինեն նեղուցների ներսի 6 զրահանաւերին։ Այն րոպէին, երբ ֆրանսիական նաւատորմը, որ գեղեցիկ կերպով ռմբակոծում էր բերդերը, դիմում էր նեղուցներից դէպի մուտքը, «Բուվէ» զրահանաւը պայթեց և ջրասուզվեց Արէն գիւղի հիւսիսային կողմում։

Ժամը 2 ու 36 ր. փոխարինելու եկած զրահանաւերը վերսկսեցին բերդերի ռմբակոծութիւնը, որոնք նորից կրակ սկսեցին։ Բերդերի ռմբակոծութիւնը շարունակվեց և դրա հետ միաժամանակ տեղի էր ունենում ականների որսում։

Ժամը 4 ու 9 ր. «Իրէզիստիբլը» դուրս եկաւ ռազմագծից խիստ վնասված և ջրի տակն անցաւ ժ. 5 ու 50 ր. դիպչելով հաւանօրէն լողացող ականի։ Ժամը 6 ու 5 ր. «Օշէնը» նոյնպէս կպաւ ականի։ Երկու ռազմանաւն էլ ջրասուզվեցին։ Այդ նաւերի նաւաստիները համարեա ամբողջ կազմով ազատվեցին թշնամու կրակի տակ։ «Գօլուան» վնասվեց թնդանօթային կրակից։ «Ինֆլէկսիբլ» զրահանաւի վրա խոշոր ռումբից վնասվել է մի մասը։ «Ինֆլէկսիբլը» պէտք է վերանորոգվի։

Բերդերի ռմբակոծութիւնը և ականներ որսալը դադարեցին մթնշաղը ընկնելուց յետոյ։ Մեր շեշտակի ուժեղ կրակի հասցրած վնասների չափը դեռ պարզ չէ։ Անգլիական նաւերի վրա մարդկային կորուստներն աննշան են։ Բայց «Բուվէի» ամբողջ նաւաստիները զոհվեցին նաւի հետ։ «Կվին» և «Էմպլակաբլ» ռազմանաւերը մեկնել են Անգլիայից՝ փոխարինելու ջրասուզված նաւերին։ Նրանց ժամանմամբ բրիտանական նաւատորմը կունենայ նախկին ույժը։

Գործողութիւնները շարունակվում են, վասնզի դաշնակիցների ծովային ույժերը դեռ անսպառ են։

ՍՕԼՈՒՆ.—Հեռագրում են, որ Դարդանէլ քաղաքը այրվում է դաշնակից նաւատորմի ուժեղ ռմբակոծութիւնից։

ԼՕՆԴՈՆ.—Տենէդոսից հեռագրում են, որ 6 զրահանաւ նորից մտան նեղուցները։ Վատ եղանակի պատճառով, այսօր չի կարելի վերսկսել եռանդուն գործողութիւնները։

ՊԱՐԻԶ.—Մատնանշելով ֆրանսիական ծովային զօրամասի հերոսական գործողութիւնները Դարդանէլում, ծովային մինիստրութիւնը յայտնում է, որ «Բուվէ» զրահանաւի նաւաստիներից ազատվել են միայն 54 հոգի. միւս ռազմանաւերի մարդկային կորուստներն աննշան են։

ՊԱՐԻԶ.—«Matin»-ը Դարդանէլը պաշարելու ժամանակ դաշնակիցների ունեցած կորուստների առիթով գրում է. «Ֆրանսիացի և անգլիացի ծովային զինուորները առաջուց գիտէին, որ այդ ձեռնարկութեան հետ կապված վտանգը չի արգելի դաշնակից դրօշակներին ծածանվել նեղուցների վրա և աստիճանաբար առաջանալ դէպի Կ. Պոլիս։ Ֆրանսիան և Անգլիան իրար խօսք են տուել այդ անելու և նրանք իրանց խօսքը չեն դրժի։ Միլլերանի վճռի համաձայն, 1916 թ. նորակոչները պատերազմի դաշտը կուղարկվեն ապրիլի կէսերին»։

ՊԱՐԻԶ.—Ծովային մինիստրը ուղարկեց Դարդանէլում գործող ծովային դիվիզիայի հրամանատար ծովակալ Գէպրատտին հեռագիր, որի մէջ շնորհաւորում է օֆիցերներին և նաւաստիներին ցոյց տուած քաջութեան առիթով և ցաւ է արտայայտում փառաւոր կռւում ընկած զոհերի առիթով, և հաստատ համոզմունք է յայտնում վերջնական աջողութեան նկատմամբ։

ԹԻՒՐՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐՋԸ

(Պետ. Հեռ. Գործ.)

8 մարտի

ՍՕԼՈՒՆ.—Կ. Պոլսից հաղորդում են. «Գալլիպոլիում գտնվում են 40,000 թիւրք զինուոր Էսադ-փաշայի հրամանատարութեան ներքոյ, Մարմարա ծովի եւրոպական ափում 110,000-ից ոչ պակաս, ասիական ափում՝ 40,000։ Վերջին օրերս զէնքի են կանչված մեծ թւով պահեստիներ»։

ԲՈՒԽԱՐԵՍՏ.—Կ. Պոլսից հաղորդում են, որ, չը նայած «Գեբէնի» ստացած վնասվածքները ուղղելու բոլոր ջանքերին, անհրաժեշտ նիւթի պակասութիւնն ու համապատասխան նաւակառուցման բացակայութիւնը թոյլ չը տուին էական հետևանքներ հասնել Թիւրքիայի առաջնակարգ ռազմանաւեր ներկայանում են ականանաւերը և հականականանաւերը։

Եկան մի քանի գերմանացի օդագնաց օֆիցէրներ իրանց գործիքներով, որոնցով նրանք դիմում են Դարդանէլ։

Զինուորական իշխանութիւնների կարգադրութեամբ, Վերին Բոսֆորի բնակիչները հեռացել են իրանց բնակավայրից։

Պնդում են, որ Ռոդոստոյի և Գալլիպոլի թերակղզու միջև կենտրոնացած են 60,000 զինուոր գերման օֆիցէրների հրամանատարութեան ներքոյ։

ՊԱՐԻԶ.—«Թանը» գրում է. «Ո՛չ Ֆրանսիան, ոչ Մեծ-Բրիտանիան, ոչ Ռուսաստանը այլևս առիթ չունեն ձգտել խլելու իրարից Սև ծովի բանալիները։ Պարիզը և Լօնդօնը այլևս չեն առարկում, որպէսզի այդ բանալիները տրվեն Ռուսաստանին, մանաւանդ որ՝ նեղուցները փակելու սկզբունքը այլևս գոյութիւն չունի այն օրից, երբ դաշնակիցները վճռեցին բանալ անցքը, որ փակել էին թիւրքերը գերմանացիների հրամանով։ Ֆրանսիան կարող է միայն ողջունել, որ իր դաշնակիցը մտնում է միջերկրական պետութիւնների շարքը։ Անգլիան այլևս չէ վախենում, թէ ռուս սև-ծովեան նաւատորմը արշաւանքի կը ձեռնարկէ Հնդկաստանը գրաւելու նպատակով»։

Վերջում լրագիրն ասում է, որ բոլոր ժողովուրդների իրաւունքները կը պաշտպանվեն, և միացած պետութիւնները չը պէտք է երկիւղ կրեն ռուսների՝ նեղուցներին տիրանալու անպատ հետևանքներից։

ԲՈՒԽԱՐԵՍՏ.—«Դիմինիացա» լրագիրը հաղորդում է, որ մարտի 6-ին, Կոնստանցից 6 մղոն հեռաւորութեան վրա, բաց ծովում նկատվեց թիւրքաց նաւատորմը բաղկացած «Բրէսլաուից» և 6 ականանաւից։ Կարծում են, որ նաւատորմը դիմում է դէպի Սուլին՝ մերձդանուբեան ռուսական ծովափը՝ ռուսական նաւերը ռմբակոծելու նպատակով։

Գերմանացի ճանապարհորդները, որոնք գալիս են Կ. Պօլսից, պատմում են, որ ամբողջ թիւրքաց նաւատորմը, հաշւած «Գեբէնին» և «Բրէսլաուին», գտնվում է Կ. Պօլսում և միայն «Համիդիէն» է, որի վրա շինված է 4 խողովակ, որպէսզի նրան ընդունեն «Բրէսլաուի» տեղ, և «Մէջիդիէն» է, որոնք գտնվում են Սև-ծովում ականանաւերի և հականականանաւերի հետ։

(Լրագիրներից)

◆ Թիւրք զօրքերի մէջ, ինչպէս հեռագրում են Սալոնիկից, լուրջ շարժում է բռնկվել Էնվէր-փաշայի դէմ։

◆ Ռումինական «Ունիվէրսալ» լրագիրը սենսացիոն տեղեկութիւն է ստացել, թէ իբր Թիւրքաց գահաժառանգ Եուսուֆ-Իզզէդդինը գտնվել է մահացված իր պալատում։

◆ «Կեօլն. Ցայտ.»-ը ճշտում է Աբդիւլ-Համիդի որդի Բուրհան-Էդդինի սպանութեան տեղեկութիւնը։

◆ «В. В.»-ին հեռագրում են, որ Հռոմում լուր է տարածված, թէ Կ. Պօլսում սպանվել է ֆօն-դէր Գոլց-փաշան։

◆ Յունաստանը բողոքեց, որ դաշնակիցները գրաւել են Դարդանէլի մօտի կղզիները։ Իբրև պատասխան Յունաստանին հասկացրին, որ նա իր գոյութեամբ պարտական է դաշնակիցներին։

◆ Թիւրքիան առաջարկեց Յունաստանին չէզոքութեան համար Եգէյեան կղզիները։ Յունաստանը մերժեց այդ առաջարկութիւնը։ Բանակցութիւնները շարունակվում են։

◆ «Р. У.»-ին հեռագրում են Հռոմից. «Աւստրիական նաւատորմը, որ կանգնած է Պոլի շրջանում, վճռել է մի խելառ քայլ անել. ճեղքել պաշարումը՝ Թիւրքիային օգնութեան հասնելու նպատակով»։

◆ Դարդանէլի ամրութիւնների պաշտպանութիւնը ղեկավարող գերմանացի գեներալ ֆօն-Կլուգգէն սպանվել է դաշնակիցների ռմբակոծութեան ժամանակ։

◆ Մայրաքաղաքի թերթերը տեղեկացնում են, որ «Դաշնակցութիւնը» մի յուշագիր է ներկայացրել Բ. Դրան, թւելով մէկիկ-մէկիկ Վանի և Բիթլիսի վիլայէթներում կատարված սարսափները։ «Դաշնակցութեան» զինված խմբերը կանգնեցնում են քիւրդերի առաջխաղացումը։ Հնարաւոր է հայերի ընդհանուր ապստամբութիւնը։

◆ Սոֆիայից հեռագրում են «Р. В.»-ին. «Այստեղ մասնաւոր նամակ է ստացվել Էրզրումից, որ թիւրքերի դրութիւնը սոսկալի է։ Վարակիչ հիւանդութիւններից ամեն օր մահանում են մօտ 500 մարդ։ Ռազմամթերքի ու սննդի խիստ պակասութիւն է։ Մեռել է ի թիւս այլոց սուլթանի փեսայ Իսմայիլ Հակկը-բէյը, որի մահը, սակայն, գաղտնի են պահում»։

◆ Բուխարէստից հեռագրում են, որ բուլղարական զօրքերը Ստարի Զագօրի վրայով աճապարում են դէպի Թիւրքաց սահմանը։

◆ Կ. Պօլսում գտնվում են 5000 գերմանացի օֆիցէր և զինուոր։ Դարդանէլի բերդերում 2500 գերմանացի արտիլերիստներ։

◆ Կ. Պօլսում Էնվէր-փաշայի կարգադրութեամբ իբր թէ կալանաւորվել է Սանդէրս գեներալը, որի ընտանիքը փախել է արդէն Կ. Պօլսից։

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄ

—o—

ՊԵՐԵՄԻՇԼԸ ԱՆՁՆԱՏՈՒՐ ԵՂԱՒ

Երէկ, մարտի 9-ին, Կովկասեան զօրաբանակի շտաբի գլխաւոր գեներալ-մայոր Բոլխովիտինովը ստացել է Գերագոյն Հրամանատարի կայանից հետևեալ հեռագիրը.

Այսօր առաւօտեան, մարտի 9-ին, Պերեմիշլ բերդը անձնատուր եղաւ մեր զօրքին։ Կայանում, Թագաւոր Կայսրի, Գերագոյն Հրամանատարի և ամբողջ շտաբի ներկայութեամբ կատարվեց գոհաբանական մաղթանք։

ՌՈՒՍ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԵՒ ՌՈՒՍ-ԱՒՍՏՐԻԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

(Պետ. Հեռ. Գործ.)

6—7 մարտի

ՊԵՏՐՈԳՐԱԴ.—Պաշտօնական։ Գերագոյն Զօրահրամանատարի շտաբի կողմից.

Նէմանի ձախ ափում մենք կռւով գրաւեցինք Բէյսիէն։ Մեր հեծելազօրքը հետապնդեց դէպի Սէյնա նահանջող գերմանացիներին։

Պրասնիշի և Օստրօլենի ուղղութեամբ շարունակվում են մասնաւոր կռիւներ առանձին գիւղերի և բարձրաւանդակների համար։

Կարպատներում մարտի 5-ին թշնամին ապարդիւն յարձակում գործեց Ցենժկովիցէ-Գօրլիցէ-Ռոպիցա-Ռուսսկայա զօրաճակատում մեր դիրքերի վրա և Մունկաչ-Ստրիյ ուղղութեամբ։

Մարտի 5-ին վիրաւորվեց մեր եռանդուն զօրապետներից մէկը՝ գեներալ-լէյտենանտ Լիսովսկին։

Պերեմիշլի մօտ մենք գերեցինք 56 հոգու։

ՊԵՏՐՈԳՐԱԴ.—Պաշտօնական։ Գերագոյն Զօրահրամանատարի շտաբի կողմից.

Նէմանի աջ ափում գերմանացիք կռւից յետոյ ետ մղվեցին Տաուրոգէնի մօտից։ Մեր զօրամասերից մինը շեշտակի արշաւով հասաւ Մէմելին և մարտի 5-ի երեկ. ժ. 8-ին, փողոցային կռւից յետոյ, որին մասնակցեցին նաև բնակիչները, տիրացաւ քաղաքին։

Նէմանի ձախ ափում վերջին օրերի կռիւներում թշնամին ստիպված էր հեռանալ Պիլվիշկից և Դուսիա-Կոպցիօվօ լճի մօտից։

Նարեվի աջ ափում կռիւները մասնակի բնոյթ ունեն։ Կազիգլօյի մօտ գերմանացիք խոշոր կորուստներ ունեցան։

Վիսլայի ձախ ափում փոփոխութիւն չը կայ։

Կարպատներում Ցենժկովիցէի մօտ տեղի ունեցած ճակատամարտում մենք խիստ ջարդ ենք տուել գերմանացիներին։ Գօրլիցէի մօտ մենք գերել ենք 800 աւստրիացի։ Ռօժանկի շրջանում թշնամու հակայարձակումները մնում են անհետևանք։

Արևելեան Գալիցիայում կռիւ է Նադվօրնայից դէպի հիւսիս։ Հակառակորդը շատ ամուր դիրք ունի Պերեմիշլի մօտ։ Մարտի 5-ի առաւօտից թշնամին կրակ բացեց մեր դիրքերի վրա և շարունակեց այդ մեծ ոգևորութեամբ։ Մարտի 5-ի գիշերը և մարտի 6-ի առաւօտը թշնամին դիմեց գաղտագողի յարձակման դէպի Մէդիկ-Բիկօվ-Պլէշովիցէ զօրաճակատը, բայց ժամը 2-ին մօտ, հասնելով մեր խրամատներին և կրելով ահագին կորուստներ, ցիրուցան եղաւ։ Մենք վերցրինք 3954 գերի՝ 107 օֆիցէրի հետ 16 գնդակացիր։

ՊԵՏՐՈԳՐԱԴ.—Պաշտօնական։ Գերագոյն Զօրահրամանատարի շտաբի կողմից.

Միջին Նէմանի արևմտեան մասում մեր առաջխաղացումը շարունակվում է աջողութեամբ։

Վիսլայի աջ ու ձախ ափի միացած զօրաճակատներում և Արևելեան Գալիցիայում էական փոփոխութիւններ չը կան։

Կարպատներում մեր զօրքերը մեծ աջողութիւն ձեռք բերին Սվիդնիկի և Սմօլնիկի շրջանում, ուր մենք տիրացանք թշնամու գլխաւոր դիրքի մի քանի մասերին, գերելով 2400 հոգի՝ 46 օֆիցէրի հետ ու ձեռք ձգելով 3 թնդանօթ ու 5 գնդակացիր։

Ուժօկի և Մունկաչի ուղղութեամբ բոլոր յարձակումները մենք աջողութեամբ վանեցինք։ Պերեմիշլի մօտ շարունակվում է եռանդուն թնդանօթային կռիւ։ Արևմտեան զօրաճակատում մենք գրաւեցինք Կրասնիչին գիւղը։

Գերմանացիք վանվելով Մէմելի և Տաուրոգէնի մօտից՝ շարունակում են մնալ պասիվ։

Մարտի 7-ին Օսովէցի մօտ հանգիստ էր։ Հնարաւոր է, որ պատերազմական գործողութիւններին արգելք է լինում ձիւնախառն փոթորիկը։

Մեր թնդանօթները զգալի կորուստներ պատճառեցին գերմանացիներին Միխով գիւղի մօտ։ Հրացանաձգութիւնը կատարվում է եռանդով։ Վիսլայի ձախ ափում կրակը վերջին օրերում նոյնպէս ուժեղացել է։

ՊԵՏՐՈԳՐԱԴ.—Մեր զօրքերը հասան Մէմէլ մարտի 5-ի երեկոյեան։ Քաղաքը պաշտպանվում էր լանդշտուրմի երկու գնդերով, որոնք վանվելով դէպի քաղաք՝ խառնվեցին ազգաբնակութեան հետ։ Երբ երեկոյեան ժ. 8-ին քաղաք մտան, նրանց հանդիպեցին տներից և պատուհաններից արձակվող կրակի։ Կռւում էին ոչ միայն զօրքերը, այլ և բնակիչները։ Մեր զօրքերը դուրս եկան Մէմէլից։ Քաղաքը կարճ ժամանակ ռմբակոծվեց։ Մեր ռումբերը ստիպեցին թշնամուն վերջ տալ դիմադրութեան։ Քաղաքի ազգաբնակութիւնը հանվեց քաղաքից։

Եսկվարնօյի շրջանում մեր թնդանօթային կրակից թշնամու դիրքերից մէկը հրդեհվեց 200 քայլ տարածութեամբ։ Խրամատներից դուրս վազող թշնամի զինուորները ընկնում էին մեր կրակի տակ։

Գերմանացիների յարձակումները Միշինեց-Կազիգլօ ուղղութեամբ սկսվեցին մարտի 6-ին։ Առ. ժ. 5-ին թշնամու առաջապահ գնդերը հասան մեր խութերին և սուր քաշվեցին։ Գերմանացիք գործադրում էին նոր տեսակի թնդանօթներ։

Վիսլայի ձախ ափում մեր թնդանօթային կրակը ցրեց մի քանի գերմանական գումարտակ։

Պերեմիշլի մօտ թշնամին օրվայ մէջ կրակում էր մօտ 20,000 ռումբ։ Մեր զօրքերը բերդի մերկային կրակի ուժից ստիպված եղան ետ քաշվել մի կամ երկու վերստ, կորցնելով 70 մարդ։ Մարտի 6-ին մենք ձեռք ձգեցինք թշնամու մի աէրոպլան, որ բերդից տանում էր վաւերագրեր և նամակներ։

ՖՐԱՆՍ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԵՒ ԱՆԳԼՕ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

(Պետ. Հեռ. Գործ.)

5—8 մարտի

ԼՕՆԴՕՆ.—Նէվշապէլի մօտ տեղի ունեցած կռւի ականատեսներից մէկը այն կարծիքն է յայտնում, որ այդ կռիւը արևմտեան զօրաճակատում տեղի ունեցած կռիւներից ամենաարիւնահեղն էր։ Անգլիական հրետանիների շեշտակի կրակը վանեց գերմանական բոլոր հակայարձակումները։ Անգլիական և հնդկական զօրքերը յաջորդական յարձակումներով գրաւեցին մի քանի մղոն խրամատներ. երբ նրանցից մի քանիսը գերմանացիք խլեցին, անգլիացիք դիմեցին խիզախ հակայարձակման և նորից ձեռք ձգեցին բոլոր խրամատները, ուր և նրանք ներկայումս ամրացել են։

ՊԱՐԻԶ.—Պաշտօնապէս յայտարարվում է, որ գերմանական մի «ցէպպելին» ռումբեր նետեց Կալէի վրա, բայց լուրջ վնասներ չեղան, բացի 9 մարդկային զոհերից։

ՊԱՐԻԶ.—Պաշտօնապէս հաղորդվում է, որ Լարուասէլի մօտ, Ալբերից դէպի հիւսիս-արևելք գերմանացիք, ուժեղ ռմբակոծութիւնից յետոյ, փորձեցին գիշերային յարձակում գործել, որը վանվեց մեր կողմից նրանց համար խոշոր կորուստներով։

Շամպանում լոյս շաբաթ օրվայ գիշերը թշնամին հակայարձակման դիմեց Պէրտի արևմտեան մասում, բայց վանվեց։ Մեր թնդանօթների կրակը մեծ կորուստներ պատճառեց թշնամուն։

Արգոնի բարձրաւանդակում Բոլանտի ուղղութեամբ տեղի էր ունենում բաւական ուժեղ թնդանօթային կռիւ։ Էպարժի մօտ մենք շարունակեցինք առաջանալ, վանելով այստեղ երկու հակայարձակում։ Մենք ձե ձգեցինք գերմանական դիրքի մեծ մա որի պատճառով կռիւ էր վերջին երկու րը։ Թշնամին երեք անգամ հակայարձակ գործեց, բայց ապարդիւն, թողնելով դում շատ սպանվածներ։ Մենք վերցրի գերիներ։

Լեպրէտրի անտառում մենք մասամբ առաջացել ենք։

ՍՎԱԿՕՊՄՈՒՆԴ.—Պատերազմական գ ծողութիւնները գեներալ Բոտայի հրաման տարութեամբ հնարաւորութիւն տւեցին գ րել աւելի քան 200 ապստամբ և ձեռք ձ երկու դաշտային թնդանօթ։

ՊԱՐԻԶ.—«Ցէպպելինից» նետված ռու բերից մէկն ընկաւ Րիւ-դէ-Դամ փողոց արևմտեան կայարանի շինութեան տանի վրա, բայց որում սկսված աննշան հրդե շուտով հանգցրին. միւս ռումբը, ընկնելով Անտուանում, հրդեհեց յարկի մի շէնքակ Ամիէնի վրա նետած 7 ռումբերից բաւ կան լուրջ վնասներ պատճառեցին և վիր ւորեցին 3 մարդու։ Կոմպիէնյում թէ վիրաւորվել են 2 բանուոր։ Լէվալուա-Պէ րէում ռումբից վիրաւորվել են 2 երեխ սարդ։

ՊԱՐԻԶ.—Երէկ գիշեր, «ցէպպելինի» բևալու պատճառով, ձեռք առնվեցին զ ւորական իշխանութիւնների պատուի միջոցները. փողեր հնչվեցին և ազգաբն կութիւնը ամբողջ Պարիզում ճրագները պէսպէս հանգցրեց։ «Ցէպպելինը» նետ 2 ռումբ Պարիզի վրա, 3-րդը առաջ բեր հրդեհ Նէյլի-սիւր-Սէն արուարձանում։

ԱՒՍՏՐՕ-ՍԵՐԲԻԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

(Պետ. Հեռ. Գործ.)

7 մարտի

ՆԻՇ.—Առաւօտեան Բէլգրադի մօտ տե էր ունենում թնդանօթային կարճատև կռ որ ապացուցեց մեր թնդանօթների առաւ լութիւնը։ Թշնամու խոշոր թնդանօթներ կրակն անհետևանք մնաց։ Մեր թնդանօ ները մեծ վնասներ հասցրին Աւստր Նաւահանգստում կանգնած շատ նաւերի։

Երեկոյեան Սմեդերևոյի ուղղութեամ սկսվեց թոյլ թնդանօթային կռիւ, բա թշնամու թնդանօթները ստիպված եղ շուտով լռել։

ԾՈՎԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄ

(Պետ. Հեռ. Գործ.)

7 մարտի

ԼՕՆԴՕՆ.—«Բլիւջէկէա» և «Նայրդֆոր շոգենաւերը ենթարկվել են ականի յարձ ման Բիչի-Գիդի մօտ։ Առաջին նաւը վնա ված դիմում է դէպի Սաուտէմտօն։ «Նայր ֆորտը» նոյնպէս վնասուածքներ է ստաց և եկել է Գրէվսէնդ։ Նաւաստիներն ազա վել են բացի մէկից։

ՀԱՄԱԵՒՐՕՊԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐՋԸ

(Պետ. Հեռ. Գործ.)

6—8 մարտի

ՊԱՐԻԶ.— Պատգամաւորների պալատ ֆինանսների մինիստր Րիբօն մատնանշ որ պատերազմական նոր պահանջների համեմատ ծախսերն էլ աճեցին, մասնաւորապէս Դարդանէլում սկսված գործողութիւններից, բայց գլխաւորապէս պատերազմի վնասված ազգաբնակութեանը օգնելու անհրաժեշտութեան պատճառով։ Մինիստր վերջում ասաց. «Մենք ամեն ճշմարտու թիւն յայտնում ենք հասարակութեան մենք կարիք չունենք թագցնել իբրև

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

ԷՋՄԻԱԾՆԻ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ*)

Կիրակի, մարտի 1-ին, երեկոյեան նիստում, համագումարը լսեց զեկուցումները «Եղբայրական Օգնութեան» Էջմիածնի, Երևանի, Ալէքսանդրապօլի, Իգդիրի, Հին-Նախիջևանի Յանձնաժողովների, Թիֆլիսի Հայկ. Կենտրոն. Կոմիտէի, Թիֆլիսի Մխական Միութեան, Հայ Նպաստամատոյց Ընկերութեան, Բագուի Հայկ. Բիւրօյի, Թիֆլիսի Քաղ. Յանձնաժողովի, Պարսկահայերի Յանձնաժողովի, Նոր-Նախիջևանի և Սիմֆերոպօլի, Մոսկվայի ներկայացուցիչների զեկուցումները, որոնց մի քանիսը, օրինակ Էջմիածնինը, Երևանինը խիստ մանրամասն էին։

Էջմիածնի Գլխաւոր Կարգադրիչ Յանձնաժողովի կողմից՝ տեղեկաբեր Մատթէոս եպիսկոպոսի կարդացած մանրամասն զեկուցումից երևաց, որ 1) 1914 թ. դեկտ. 29-ից մինչև 1915 թ. յունվարի 15-ը, Էջմիածնում կերակրվում էին օրական 5600—7000 հոգի գաղթականներ, որոնք շարունակ գալիս էին, մի քանի օր մնում այդտեղ, հանգստանում, սկզբնական օգնութիւն ստանում և ապա ուղարկվում գիւղերը կամ Երևան. եկող գաղթականների թիւը 15,000 էր, որոնցից մինչև յունվարի 15-ը Էջմիածնում մնացել էին մօտ 1000 հոգի, մնացածը ուղարկվել էին։ Ներկայումս Էջմիածնի գաւառում և Վաղարշապատում պատսպարված են 7200 հոգի (դրանցից 1200-ը՝ Վաղարշապատում)։ 2) Կարգադիր Յանձնաժողովը բացել է հիւանդանոց և ամբուլատորիա. 3) որբերի մասին որոշել է բանալ դպրոց՝ Վաղարշապատի ծխական դպրոցին կից. 4) 2 ամսվայ ընթացքում, մինչև փետրվարի 23-ը, ստացել է Վեհ. Կաթողիկոսի միջոցով 270,871 ռ. նուէրներ հայութեան զանազան վայրերից (խոշոր նուէրներն են ա) Նոր-Նախիջևանից 2 նուագով 20,000 ռ., բ) Զաւա կղզու Սուրաբայա քաղաքի հայերից և Լօնդօնի Հայկ. Միութիւնից՝ 48,510 ռ., գ) Եգիպտոսից, Նուպար-փաշայից, 10,000 ռ. (բացի այն 20,000 ռ. գումարից, որ ուղարկված է Թիֆլիս Մեսրոպ եպիսկոպոսին և դեռ չէ յանձնված Վեհ. Կաթողիկոսի տրամադրութեան), դ) Լօնդօնի Հայկական Միութիւնից՝ դարձեալ 10,080 ռ., ե) Մոսկվայի Յանձնաժողովից 2 անգամ՝ 20,000 ռ., զ) Պետրօգրադից, հայոց եկեղեցական խորհրդից՝ 25,000 ռ., իշխ. Աբ. Լազարեանից՝ 25,000 ռ., Հայկ. Կոմիտէից՝ 25,000 ռ., է) Եկատերինոդարից, եղբ. Բարսեղօֆներից և հանգուցեալ Նիկէտի ընտանիքից՝ 10,000 ռ., ը) Արմաւիրի Հայկ. Կոմիտէից՝ 5000 ռ. և այլն). 5) 2 ամսվայ ընթացքում ծախսել է 90,500 ռ. (որից ուղարկել է Երևանի Յանձնաժողովին 44,000 ռ., Ալէքսանդրապօլի՝ 5000 ռ., Հին-Նախիջևանի՝ 5000 ռ., Էջմիածնի՝ 36,000 ռ., Իգդիրի՝ 500 ռ.), պատրաստ կայ առ 23 փետրվարի՝ 180,371 ռ.։ Օգնութիւնը կայացել է նրանում, որ գաղթականներին տրվել են հաց, շաքար, թէյ, երբեմն տաք կերակուր, սապոն, հագուստեղէն, վերմակ, դօշակ, բժշկական օգնութիւն։

Երևանի Յանձնաժողովի տեղեկաբեր Մաւինեանի կարդացած զեկուցումից երևաց, որ Երևանի Նահանգում կազմակերպված միօրեայ ցուցակագրութիւնից երևացել է, որ Երևանի նահանգում, բացի Ալէքսանդրապօլի գաւառից, հայ գաղթականների թիւը եղել է 24,665, որից 3065 հոգի գնացել են զանազան տեղեր, իսկ այժմ կան 21,600 հոգի (Երևան քաղաքում՝ 1258 հոգի, Երևանի գաւառում՝ 3344, Էջմիածնի գ.՝ 6920, Հին-Նախիջևանի գ.՝ 5292, Սուրմալուի գաւ.՝ 2974, Շարուր-Դարալագեազի գաւ.՝ 993 և Նոր-Բայազէտի գաւ.՝ 820)։ Երևանի Յանձնաժողովը մուտք ունեցել է 63,543 ռ., ծախք՝ 44,000 ռ., այժմ պատրաստ ունի 19,543 ռ.։ Մարտ ամսի համար Թիֆլիսից խնդրվել է 57,000 ռ. Կովկասեան Գլխաւոր կոմիտէից։

Թիֆլիսի Կենտր. Կոմիտէի կողմից զեկուցումն տուեց Շարաֆեան. երևաց, որ այդ Կոմիտէն, նոյեմբերից մինչև 1 մարտի ստացել է 103,250 ռ., ծախսել է միայն 48,680 ռ., ուրեմն պատրաստ ունի 54,000 ռ.։ Շարաֆեանի կազմած ցուցակագրութեան համաձայն՝ բոլոր հայ փախստական-գաղթականների թիւը՝ 61,000 է. այդ փախստականները ընդհանուր կորուստ են ունեցել 15 միլիոն րուբլու. դրանց պահպանութեան համար (միայն ուտելիքի) օրական ծախս պէտք է 14,000 ռ., ամսական 450,000 ռ., իսկ եթէ հաշւենք և այլ ծախսերը, հարկաւոր է առնուազն 3 միլ. րուբլի 6 ամսվայ համար։ Շարաֆեանի թւանշանները շատ էլ համոզիչ չէին։ Աչքի ընկաւ այն հանգամանքը, որ Թիֆլիսի Կենտրոն. Կոմիտէն, որ ոչ մի առիթ չէր փախցնում ամենամռայլ գոյներով նկարագրելու փախստականների թշուառ վիճակը, 4 ամսվայ ընթացքում ծախսել է միայն 48,000 ռ., մինչ կարող էր և ունէր միջոց՝ աւելին ծախսելու։

Ալէքսանդրապօլի Յանձնաժողովի կողմից զեկուցանող պ. Թարխանեան յայտնեց, որ Ալէքսանդրապօլի գաւառում գաղթականների թիւը, չը հաշւած Ղարաքիլիսէն, 6500 է։ Մուտք ունեցել է 23,352 րուբլի, ծախք 18,000 ռ.։ Հաշւել են, որ ամեն մի ընտանիք իր տեղը վերադարձնելու և տնտեսութիւնը վերականգնելու համար հարկաւոր է ծախսել 500 րուբլի։

Իգդիրի Յանձնաժողովի կողմից զեկուցումն է տալիս Ծերունի Քաջազնունի, որ շատ իրազեկ է երևում գաղթականների կեանքին։ Նա հաղորդեց խիստ հետաքրքրական տեղեկութիւններ։ Իգդիրի վրայով անցել են փախստականներ՝ Բայազիդի, Ալաշկերտի, Դիադինի կողմերից, ուր թալանված են 29 վայրեր, որոնցից 2 քաղաք և 27 գիւղ. կոտորած եղել է 18 վայրերում, որոնցից 3 քաղաք և 15 գիւղ։ Մեծ կոտորած եղել է Ալաշկերտում, ուր 300 տնից ազատվել են կոտորածից միայն 30 տուն, իսկ մնացած 270-ը անխնայ ջնջվել են։ Կոտորածի 2-րդ վայրը՝ Մոլլա-Սուլէյման գիւղն է և Զէտական, ուր կոտորածը նոյնպէս սոսկալի է եղել։ Ալաշկերտի շրջանը տուել է 18,000 փախստական։

Հին-Նախիջևանի Յանձնաժողովի կողմից զեկուցեց Սիոն վարդապետը։ Այդ Յանձնաժողովը, որ և գաւառային է, անխտիր օգնել և խնամել է թէ հայ և թէ ասորի փախստականներին։ Մուտք ունեցել է 30,975 ռ., որ ծախսել է ամբողջովին։

Թիֆլիսի Քաղաքային Յանձնաժողովի կողմից զեկուցումն տուեց Հ. Առաքելեան, որ յայտնեց, թէ Թիֆլիս քաղաքում ապաստանված փախստականների թիւը պէտք է ընդունել 7000, որից 3800 հայ (Թիւր քիայից, Պարսկաստանից և Արդուինի Արդահանի շրջաններից, 3000 ասոր և 200՝ զանազան ազգութիւններից։ Յանձնաժողովը ծախսել է 12,000 րուբլի։

Բագուի կողմից պ. Ալ. Պարոնեան զեկուցեց, որ Բագուն ծախսել է փախստականների համար մինչև այսօր 35—40,000 ռ., ուղարկելով տաք հագուստեղէն, մի քանի վագոն ալիւր, անկողիններ և ամբուլատորիա՝ Երևանի, Ալէքսանդրապօլի շրջանները իր յատուկ ներկայացուցիչների (Բր Թագիանոսեան և Գ. Պալեան) ձեռքով։

Մոսկվայի կողմից ինժենէր Թառայեան զեկուցանում է, որ Մոսկվան հաւաքել ուղարկել է փախստականների համար մօտ 70,000 րուբլի։

Պարսկահայերի Յանձնաժողովի կողմից Ս. Աւագեան յայտնում է, որ նա ունեցել է մուտք 5581 ռ. և ծախք 4000 րուբլի։

Սիմֆերոպօլի Կոմիտէի կողմից Եր Նալբանդեան զեկուցեց, որ այդտեղի կոմիտէտը բաղկացած է 66 անդամներից, որոնք փոքրաքանակ հայ գաղութի վր դրել են 60,000 ռ. տուրք փախստականների և կամաւորների օգտին և աջողութեամբ հաւաքում են։

Նոր-Նախիջևանի—Ռոստովի կողմից զեկուցումն է տալիս Գէորգ վ. Զօրիկեան, որ յայտնում է, թէ հաւաքվել է 160,000 ռ., ծախսվել է 131,000 ռ., որից փախստականների վրա 31,000 ռ.։

Թիֆլիսի Կանանց Յանձնաժողովը մի գր թեամբ ցաւ է յայտնում, որ ինքն հր ւիրված չէ համագումարին, և խնդրում ապագային ի նկատի ունենալ իրան։

Թիֆլիսի Մխական Միութեան ներկայ

---

*) Տես «Մշակ» № 50.

րութիւնը թղթադրամներ բաց թողնելու միջոցով։ Պալատն ընդունեց դաշնակիցներին և բարեկամ երկիրներին փոխառութիւններ տալու օրինագիծը։ Պատասխանելով հարցապնդման Րիբօն յայտնեց, որ ֆրանսիական կառավարութիւնը համաձայնեց փոխառութիւններ տալ Սերբիային և Բելգիային։ Ընդ սմին պետական գանձատան անտոկոս պարտաթղթեր բաց կը թողնվեն Ռուսաստանի հաշուին։ Րիբօն ասաց. «Մենք փոխառութիւններ տուինք Բելգիային և Սերբիային. մտադիր ենք տալ նաև բոլոր այն երկիրներին, որոնք պատրաստ են զինված ուժով պաշտպանել Ֆրանսիայի գործը։ Ինչ վերաբերում է Ռուսաստանին, թէև նա առաջարկել է մեզ վճարել տոկոսները, բայց մենք վճռել ենք տալ նրան պետական գանձատան վկայաթղթերը առանց տոկոսների»։ Րիբօյի ճառը ընդունվեց բուռն ծափահարութիւններով։

ՏՕԿԻՕ.— Մամուլը, շարունակելով քննել ռուս-ճապօնական դաշնակցութեան հարցը, խորհուրդ է տալիս կառավարութեանը ձեռնարկել դաշնակցութեան իրականացման։

ՊԷԿԻՆ.— Չին-ճապօնական բանակցութիւնները յետաձգվեցին անորոշ ժամանակով ճապօնական դեսպանի հետ պատահած դէպքի պատճառով, որ ծանր վնասուածքներ ստացաւ ձիուց վայր ընկնելուց։

ՊԵՏՐՕԳՐԱԴ.— «Օրէնքների ժողովածուի» մէջ տպված է, որ հակաժանտախտային մասնաժողովի տրամադրութեան տակ յատկացված է 12 միլիոն ռուբլի հակաժանտախտային ու հակախոլերային ձեռնարկութիւնների համար։

ՍՕԼՈՒՆ.— Պաշտօնական աղբիւրից տեղեկացնում են, որ Նոր Յունաստանի 1888 և 1889 թ. թ. պահեստները զէնքի են կանչված միայն 4 ամսով, որովհետև զինուորական մինիստրը մտադիր է զէնքի կանչել Նոր Յունաստանի դեռ չը ծառայած պահեստի զինուորներին։

Միտիլէնից հաղորդում են, որ Այվալըի շրջակայքում յունական ջարդ է տեղի ունեցել։ Շատ գիւղեր բաշիբօզուկները հրդեհել են։

ՊԵՏՐՕԳՐԱԴ.— Գեներալ-շտաբի գլխաւոր վարչութիւնը առանձին կոչով յորդորում է ազգաբնակութեանը պատերազմական գաղտնիքները պահել լիակատար չափով։ Մեր բանակի զինուորականների կանայք, քոյրերը, մայրերը, հայրերը, եղբայրները, հարազատները և ծանօթները պէտք է խուսափեն ամեն տեսակ գրաւոր տեղեկութիւններից, հեռախօսով, էլեկտրաքարշի վագոններում և հասարակական տեղերում խօսակցելուց, առհասարակ այն ամեն տեղեկութիւններից, որոնք ստացել են գործող բանակից, և որոնք չը կան մամուլի մէջ։

ԼՕՆԴՕՆ.—Պաշտօնապէս յայտարարված է, որ համաձայնութիւն է կայացել կառավարութեան և տրէդ-ունիօնիստների միջև։ Մամուլի միութեան տեղեկութիւնների համաձայն, կառավարութիւնն առաջարկել է, որպէսզի կառավարութեան հսկողութեան տակ գտնվող գործարանատէրերի հասոյթը 10 տոկոսից չանցնէ. աւելորդը պէտք է տրվի պետական գանձարանին։ Ապա նա խորհուրդ է տուել տրէդ-ունիօնիստներին թեթևացնել մեծ ռոճիկներ ստացող բանուորների աշխատավարձի պայմանները։ Օգելից ըմպելիքների հաստատութիւնները մի քանի թաղերում բաց են լինելու միայն ժ. 12—2 ցերեկով և 7—9 երեկոյեան։

ԲՈՒԽԱՐԷՍՏ.—10 օր առաջ սահմանամերձ Կայնէնի կայարանով հասան գերմանական 19 վագոն՝ ապրանքով՝ ռումին կառավարութեան համար և 21 վագոն՝ Թուրքիայի համար։ Քննութիւնը պարզեց, որ վերջին վագոնները լի են ռազմամթերքով, ականներով ու այլ ռազմանիւթով։ Այդ վագոնները անմիջապէս բռնվեցին, նաև կրկին 4 կասկածելի վագոն։

ՎԱՐՇԱՎԱ.—Ֆրանսիական զինուորական պատգամաւորութիւնը Պօյի առաջնորդութեամբ մեկնեց Պարիզ։

ՄՕՍԿՎԱ.—Համաքաղաքային միութիւնը Վերխնէուդինսկից, բուրեատ ազգաբնակութիւնից ստացաւ 20,000 ռ. բժշկա-սննդախումբ կազմակերպելու համար։

ՊԵՏՐՕԳՐԱԴ.—Մինիստրների խորհուրդը որոշեց յատկացնել ներքին գործերի մինիստրութեանը 160.500,000 ռուբլի զինուորական իսկական ծառայութեան մէջ գտնվող զինուորների, զօրքի և նաւատորմի պահեստիների ընտանիքների խնամատարութեան գործի համար։

ՍՕՖԻԱ.—Ազգային ժողովին ներկայացվեց օրինագիծ զօրահանութեան դէպքում կանչված պահեստիների ընտանիքներին օգնելու մասին։

ՏՕԿԻՕ.—Այն տեղեկութիւնը, թէ իբր ամերիկեան կառավարութիւնը բողոքել է Ճապօնիայի պահանջների դէմ, անհիմն է։

Չինաստանի զանազան տեղերից տեղեկութիւններ են ստացվել պատերազմական պատրաստութիւնների մասին։

ՍՏՕԿՀՕԼՄ.—Բեռլինից հաղորդում են, որ արտաքին գործերի մինիստրութիւնը թոյլատրել է փոխադրել ռուս դիպլօմատների շարժական գոյքը։

Ռայխստագում ֆինանսների մինիստրը յայտնեց, որ նոր պատերազմական փոխառութեան ստորագրութիւնը տուեց 6 միլիարդ։ Ռայխստագը միաձայն ընդունեց ծովային մինիստրութեան նախահաշիւը, ի թիւս որի 32 միլիոն՝ նոր ռազմանաւեր կառուցանելու համար։

ՄՕՍԿՎԱ. — Բուլղարական կուլտուրական ընկերութիւնը բացեց լազարէթ 25 մահճակալով։

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐՋԸ

◆ «День»-ին հեռագրում են Բուխարէստից, որ դաշնակից նաւատորմը Ադրիատիկ ծովում սկսել է Տրիէստի պաշարումը։

◆ Երրեակ համաձայնութեան և Բուլգարիայի միջև անընդհատ բանակցութիւններ են վարվում այն մասին, որպէսզի Բուլգարիան գրաւէ Ադրիանուպոլիսը։

◆ Գերմանիան մտադիր է, եթէ Իտալիան միանայ երրեակ համաձայնութեան հետ, 250,000 զինուորից բաղկացած զօրաբանակ ուղարկել Միլան՝ Շվէյցարիայի վրայով։

◆ Պետրօգրադի քաղաքային դուման վճռել է գնել քաղաքի պէտքերի համար 2.250,000 պուդ նաւթ։

◆ Համառուսական քաղաքային միութեան կովկասեան ճիւղի պէտքերի համար Մօսկվայի կենտրօնական կօմիտէն փոխադրել է մարտի 5-ին կէս միլիօն ռուբլի։

◆ Յունաց թագաւորի եղբայր արքայազն Գէօրգը, որ հակառակորդ է Վենիզէլօսին, մեկնում է Բեռլին արտայայտելու Գերմանիային յունական համակրանքը։

◆ Բժիշկ Ֆրէնկելը Վիէննայում հնարել է միջոց բծաւոր տիֆի դէմ։

◆ Յունաց մամուլը սկսել է արձակվել Ռուսաստանի վրա, մեղադրելով նրան պանսլավիզմի մէջ։

ցուցիչ բժիշկ. Մինասեան յայտնում է տեղեկութիւններ այդ նոր մարմնի կազմութեան մասին և այն, որ նա որոշել է բանալ որբանոց 100 փախստական-մանուկների և որբերի համար։

Լսելով այն բոլոր զեկուցումները՝ համագումարը, ըստ առաջարկի պ. Եր. Թաղիանոսեանի, որոշեց նրանցից կազմել մի ընդհանուր ամփոփ զեկուցագիր և տպագրել։ Այս առիթով Մատթէոս եպիսկոպոս յայտնեց, որ Էջմիածնի Գլխաւոր Կարգադրիչ Յանձնաժողովը որոշել է հրատարակել «Եղբայրական Օգնութիւն» անունով մի յատուկ թերթ, ուր կը զետեղվեն բոլոր տեղեկութիւնները, հաշիւները փախստականների մասին։

Համագումարը ողջունեց այդ համակրելի նախաձեռնութիւնը։

Ապա համագումարը, իբրև եզրակացութիւն այդ ամենի, անցաւ քննելու թէ այն հարցերը, թէ 1) որն է փախստականների ճիշդ թիւը, 2) ինչ չափով է արտայայտվել հայ հասարակութեան նուիրատուութիւնը և ինչ չափով՝ հայ գիւղացիների աջակցութիւնը։ Իբրև միջին թիւ ընդունվեց 60,000-ը, և որովհետև 3 ամիս այդ ահագին բազմութիւնը պատսպարված է գլխաւորապէս հայ գիւղերում, ընդունելով ամեն մի փախստականի ապրուստի ծախքը՝ օրական 15 կօպէկ, դուրս կը գայ, որ պէտք էր ծախսել 3 ամսվայ մէջ 800,000 ռուբլի։ Այդ գումարից հայ հասարակութեան տուած նուէրներից մինչև այժմ ծախսվել է 300,000 ռուբլի, ուրեմն մնացած 500,000 ռուբլին պէտք է ընդունել այն չափը, որով օգնել է փախստականներին հայ գիւղացիութիւնը։

Հետևաբար օգնութեան $^5/_8$ մասը կատարել է հայ գիւղացիութիւնը, իսկ $^3/_8$ մասը հայ հասարակութիւնը։ Եւ հայ գիւղացիութիւնը այդ արել է լռելեայն, անշշուկ, առանց թմբկահարութեան։ Սակայն պարզվեց և այն հանգամանքը, որ հայ գիւղացիութեան բոլոր միջոցները սպառված են և նա այլ ևս անկարող է օգնութիւն հայթայթել, ուստի պէտք է այլ միջոցներ որոնել։

Ապա նախագահ Յուսիկ արքեպիսկոպոս յայտնեց, որ յաջորդ օրը պէտք է անցնել օրակարգի հարցերի քննութեան, որոնք են հետևեալները.

1) Փախստական-գաղթականներին խնամելու գործում ստեղծել միութիւն և սերտ կապ հաստատել բոլոր նոյն նպատակով գործող յանձնաժողովների և մարմինների մէջ։

2) Գաղթականներին սնունդ, հագուստ, անկողին բաժանելը և ընդհանրապէս նրանց խնամելը։

3) Որբ և անտէր երեխաների համար Կովկասում որբանոց հիմնելը և գաղթական երեխաների կրթութեան գործը։

4) Հիւանդանոցներ հիմնելու և բժշկական օգնութիւնը կանոնաւորապէս կազմակերպելու կարևոր հարցը։

5) Յանձնաժողովների զեկուցումներն ու հաշուետուութիւնն իրանց գործունէութեան մասին։

6) Գաղթականներին վերադարձնելու և նրանց տնտեսութիւնը երկրում բարւոքելու ու կանոնաւորելու կարևոր հարցը։

Այս օրակարգի մասին զեկուցելուց յետոյ՝ Յուսիկ արքեպ. փակեց ժողովը։

Հ. Ա.

(Կը շարունակվի)

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

ԻՏԱԼԻԱՅՈՒՄ

(Պետ. Հեռ. Գործ.)

6—8 մարտի

ՀՌՕՄ.—Հրատարակված է հրովարտակ, որի համաձայն ընդհանուր կամ մասնաւոր զօրահանութիւն յայտարարելու դէպքում յարքունիս գրաւվելուց ազատ կը լինեն հիւպատոսներին և հիւպատոսական գործակալներին պատկանեալ բոլոր տեղափոխող միջոցները ու չորքոտանիները, եթէ այդ անձինք այն տէրութիւնների հպատակներ են, որոնց կողմից և պաշտօնավարում են նրանք, բայց միևնոյն ժամանակ պարապում են առևտրով։

Հրովարտակ է հրատարակված, որով պատուիրագրվում է տեղեկացնել մինչև մարտի 9-ը ոստիկանապետին ալիւրի պաշարի քանակութիւնը։ Բացի դրանից պատուիրագրված է ամեն շաբաթ յայտնել ոստիկանապետներին ծախսած հացի քանակը։ Պահեստներում գտնվող ալիւրը պէտք է գործածվի բացառապէս տեղական ազգաբնակութեան ձեռքով։

ՀՌՕՄ.—145 ձայնով 2-ի դէմ սենատը ընդունեց երկրի զինուորական ու տնտեսական պաշտպանութեան օրինագիծը։

Մարտի 18-ին իսկական զինուորական ծառայութեան են կանչվում 1880—1888 թ.թ. պահեստի օֆիցէրները։

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՇՈՒՐՋԸ

(Պետ. Հեռ. Գործ.)

6—8 մարտի

ԹԱՒՐԻԶ.—Գահաժառանգը կանգ է առել Թաւրիզի մօտ։ Նրա հանդիսաւոր մուտքը քաղաք տեղի կունենայ ուրբաթ օրը։

ՍՊԱՀԱՆ.—Պարսկական ծառայութեան մէջ գտնվող Մաշալա-խանը, որին իր հովանաւորութեան տակ առաւ բժ. Պուժէնը, սկսել է կողոպտել կարաւանները Կաշանի և Եզդի շրջաններում։ Եզդից է բղխում այն պրօպագանդան, թէ պէտք է կոտորել Ռուսաստանի՝ և Անգլիային ընդդէմ իսլամի պաշտպան Գերմանիայի աջակցող մահմեդականներին։

ԼՕՆԴՕՆ.—Հնդկաստանի գործերի ստատս-սեկրէտարի հրատարակած հաղորդագրութիւնը պարզում է, որ ստացվել են ապացոյցներ այն մասին, թէ ինչպէս Պարսկաստանի գերմանական հիւպատոսարանների պաշտօնեաները և գերմանական Վէնկլհաուզ ֆիրմայի գործակալները զբաղվում են գաղտնի գործունէութեամբ, որպէսզի դիւրացնեն թիւրքերի մուտքը Պարսկաստան և ոտքի հանեն տեղական ցեղերին Անգլիայի դէմ։

Պարզված է, որ ոչ միայն Վէնկլհաուզի գործակալները Այվազում և Մոհամմէրում անմիջական յարաբերութիւնների մէջ էին թիւրք զօրքերի հետ, այլև երևան է հանված դաւադրութիւն, որի նպատակն է ոտքի հանել Աւղանիստանը և հնդիկ զօրքը։

Հետաքրքիր է հետևեալ վաւերաթուղթը, որ ընկել է անգլիացի իշխանութիւնների ձեռքը։ Բուշիրի նաւահանգստում մի փոքր ժամանակ առաջ ստացվեց մեծ քանակութեամբ զէնք ու ռազմամթերք և շտապով ու գաղտնի փոխադրվեց երկրի խորքը շվէդ ժանդարմ օֆիցէրների ձեռքով։ Այդ առիթով գերմանական միսիան հեռագրեց Բուշիր՝ հիւպատոսին. «Շնորհակալ ենք զէնքի մասին տեղեկացնելու համար։ Խնդրում ենք այսուհետև հետաքրքրութիւն ցոյց չը տալ դէպի այդ գործը։ Զէնքը կը փոխադրվի մեր գաղտնի նպատակի համար»։ Հիւպատոսը պատասխանեց միսսիային. «Իմ աջակցութիւնը ներկայ գործում աննկատելի մնաց։ Զէնքը փոխադրված է մի քանի օր առաջ շվէդ օֆիցէրի ձեռքով»։

Ստատս-սեկրէտարի հաղորդագրութիւնը բացատրում է, որ գերմանացիների գաղտնի նպատակը կապ ունէր պարսիկ չէյխ Րէյսա Լիգէրվալսկիի մտադրութիւնների հետ, որ ձգտում է յարձակուած գործել Բուշիրի վրա։

ԹԱՒՐԻԶ.—Երէկ, ցերեկվայ ժամը 4-ին, թնդանօթաձգութեամբ Թաւրիզ մտաւ երիտասարդ գահաժառանգը ձիով, ուղեկցութեամբ իր շքախմբի և նրա հետ Թէհրանից եկած պարսիկ ժանդարմների ու կօզակների։

Քաղաքից 10 վերստ հեռու յատկապէս վրաններ էին խփված։

Գահաժառանգին դիմաւորեցին Ատրպատականի գեն.-նահանգապետը և հիւպատոսական մարմինը, որ ողջունեց նրան աջողութեամբ Ատրպատական մտնելու առիթով։

Քաղաքից դուրս կանգնել էին ռուս զօրքերը, գլուխ ունենալով Ատրպատականի զօրամասի պետին իր շտաբով։ Նորին բարձրութիւնը բարևեց մեր զօրքերին։ Երաժշտախումբը նուագեց պարսկական հիմնը։ Զօրքերը աղաղակեցին ռուսական «ուրա»։

Ապա ճանապարհին կանգնել էին պարսիկ սարբազները, պարսից դպրոցների աշակերտները, որոնք երգում էին ազգային երգեր, և ազգաբնակութեան մեծաքանակ ամբոխներ, որոնք ցնծութեամբ ողջունում էին գահաժառանգին։

Փողոցները և բազարները շքեղ զարդարված են։

Գահաժառանգը իջևանեց Ալաղափի պալատում։

Տաք օրը և Նօվրուզի տօնի նախօրեակը հանդէսը աւելի փառահեղ դարձրին։

ՍՊԱՀԱՆ.—Լուրերի համաձայն, տեղս է գալու գերմանական հիւպատոս Պուժէնը, որ կը մնայ միայն իբրև Թիւրքաց հիւպատոս։

ՋՈՒԼՖԱ.—Ուրմիայից տեղեկացնում են, որ Թիւրքաց հիւպատոս Բաղիր-բէյը 70 ասկեարներով յարձակվեց Ուրմիայի ամերիկեան միսսիայի վրա, ուր ապաստանել են 15,000 ուղղափառ քրիստոնեաներ, դուրս հանեց միսսիայից 3 քահանայի և 2 սարկաւագի և ման ածեց նրանց փողոցներով, ծաղրելով ու անխնայ ծեծելով։ Միսսիայի բակում դրին կախաղան միսիօնէրներին կախելու համար։ Ամերիկեան միսիօնէր Ալէնը նոյնպէս գանակոծվեց ու ծաղր ու ծանակի ենթարկվեց, սակայն կարողացաւ Սալմաստ ուղարկել երկու մարդու, խնդրելով մեր զօրքերին՝ անմիջապէս շտապել օգնութեան և ազատել կենդանի մնացած քրիստոնեաներին, որովհետև միսսիան չէ կարող պաշտպանել նրանց։

ԹԷՀՐԱՆ.—Ռուսաց դեսպանը ի պատիւ Թէհրանի նոր կաբինետի ընդունելութիւն կայացրեց, որի ժամանակ պարսիկ գործիչները յոյս յայտնեցին, թէ Պարսկաստանին կաջողվի մինչև համաշխարհային պատերազմի վերջը պահպանել չէզոքութիւնը։ Կաբինէտի անդամները մտադիր են ոչ միայն պաշտպանել Պարսկաստանի չէզոքութիւնը, այլ և դիմադրել մեր այն հակառակորդներին, որոնք փորձում են Պարսկաստանին մղել պատերազմի։ Այդ փորձերի ապացոյց կարող են ծառայել այս օրերս Բենդէր-Բուշիրում Վիգէլ գերմանական հիւպատոսի մօտ խուզարկութեան ժամանակ երևան հանված դոկումենտները, որոնք պարզում են թիւրքերի և գերմանացիների կազմակերպութիւնը, ուղղված ոտքի հանելու յօգուտ սահմանային թիւրք զօրքի Պարսկաստանի մահմեդական ցեղերին։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՅՕԳՈՒՏ ՀԱՅ ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ

Ստացանք՝ 1) Թիֆլիսում, Դաւիթ-խան Աւան-Իւզբաշեանից, Նպաստամատոյց Ընկերութեան յանձնելու 10,000 ր.։ 2) Մարդակերտ գիւղից, Աբգար քահանայ Տէր-Յովհաննիսեանից՝ յանձնելու Կ. Հ. Բար. Ընկ. 20 ր.։ 3) Զաքաթալայից, Աստ. Բէկ-Յովսէփեանից, յանձնելի Նպաստ. Ընկ. 5 ր.։ 4) Նալոայից, Գաբր. քահ. Տէր-Փայեանից, հանգանակված փետրվարի 16-ին, սափրիչ Միսակ Մանուկեանի տանը նորածնի մկրտութեան հանդէսին 25 ր. 10 կ. (ցուցակը կը տպվի) յանձնելի Նպաստ. Ընկերութեան։ 5) Ղլըղ գիւղից, հայ հասարակութեան ամսավճարներից, Հանգանակիչ Յանձնախմբի Նախագահ Մ. Ղազարեանի միջոցով՝ յանձնելի Նպաստ. Ընկեր. 30 ր.։ 6) Կիզըլ-Կիայից (Տաշքէնտի գաւ.) Խաչատուր Տէր-Մեսրոպեանից, յանձնելի Նպաստ. Ընկերութեան 10 ր.։ 7) Մօսկվայից, Ռուբէն Տէր-Յակոբեանից, Ակ. Ծատուրեանի միջոցով, յանձնելի Նպաստ. Ընկեր. 100 ր.։ 8) Սարդվարից (Պարսկաստանից), կանանց յանձնախմբից (Սօֆիա Ադամեան, Արուսեակ Աստվածեան, Վարսենիկ Բէժանեան, Շուշանիկ Գէորգեան) տօներին հանգանակված գումարի (156 ր. 50 կ., որից 30 ր. յօգուտ կամաւորների) մնացեալը՝ 126 ր. 50 կ.։ 9) Մօսկվայից, Տիրուհի Կոստանեանից, յանձնելի Նպաստ. Ընկ. 100 ռուբլի։ Ընդամենը 10,426 ր. 60 կ.։ Նախկին ստացված 12,681 ր. 82 կ. գումարի հետ (տես «Մշակ» № 39) ստացել ենք 23,108 ր. 42 կ.։

ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ստացանք Սարատովից հետևեալ հեռագիրը.

Մարտի 7-ին

Երէկ, ուրբաթ, մարտի 6-ին միօրեայ ժողովարարութիւնը յօգուտ հայ փախստականների տուեց 3000 ռուբլի։ Մտադիր ենք ուղարկել այդ գումարը Ամենայն Հայոց Կաթողիկոսին։

Ծանօթ.—Անշուշտ, այսուհետև բոլոր այդպիսի գումարները պէտք է ուղարկել Ամենայն Հայոց Կաթողիկոսին, քանի որ Էջմիածնում կայացած համաժողովի որոշմամբ Գլխաւոր և Կենտրօնական Կարգադրիչ Յանձնաժողով է ընտրված Էջմիածնում, որի նախագահն է Ամենայն Հայոց Կաթողիկոսը։

ԵԿՄԱԼԵԱՆԻ ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏԸ

Գարնանային պայծառ ու արևոտ եղանակի ու ներդաշնակ երգեցողութեան մէջ կատարվեց Մակար Եկմալեանի մահվան տասնամեայ հոգեհանգստեան սգահանդէսը։

Բնութիւնը և գեղարուեստի համեստ մշակները խուռն բազմութեան հետ միաձուլում էին գեղարուեստագէտ Եկմալեանի յիշատակը, բոլորած նրա անշուք հողաթմբի առաջ ու համակված մի փշաքաղցութեան, մի խորհրդաւոր ակնածութեան զգացմունքով։

Դեռ առաւօտից Խօջիվանքի փոքրիկ եկեղեցին այդ օրը՝ մարտի 8-ին, պատմական օրվայ հանդիսաւորութեամբ, դղրդում էր այն զմայլիչ քառաձայն պատարագից, որ ունկնդիրների աչքերի ու մտքերի հանդէպ կենդանացնում էր իր մեծ ստեղծագործողի պատկերը։

Ու ճշմարիտը պէտք է ասել, Ներսիսեան դպրոցի երգեցիկ խումբը երգում էր շնորհալի կերպով իր հմուտ խմբապետ Սպիրիդօն Մելիքեանի ղեկավարութեամբ։ Իսկ գեղեցիկ երգեցողութեանը առանձին փայլ էր տալիս Տիգրան Նալբանդեան իր թովիչ ձայնով ու solo կատարումներով։

Պատարագից յետոյ, հանգուցեալի հողաթմբի վրա, որի վրա կախված էր հանգուցեալի մեծադիր լուսանկարը կանաչապատ, կատարվեց տխուր հոգեհանգիստը։ Անշուք չեղաւ այդ այն պատճառով, որ ներկայ չէ, մեր անպարտաճանաչ հոգևորական դասը, որից եկել էին միայն 7 քահանայ. ընդհակառակն, հանդիսաւոր էր այդ հոգեհանգիստը իր ներքին իմաստով, որովհետև ընդհանուր անկեղծ յարգանքի մի ուժեղ զգացմունք էր պատել այդ պահին ներկայ եղողներին։ Ամենքը զգում էին ինչ-որ անբացատրելի ուժ, որ ստիպում էր բոլորին վշտակցել անչափ, ցաւել դառնագին հողաթմբի տակ թաղված երաժշտագէտի համար։

Հանգուցեալի մասին հարկաւոր չէր հայկական փքուն դամբանական։ Խօսողների անպաճոյճ խօսքերի մէջ կար սրտաբուխ տոն, անկեղծ արտայայտութիւն։

Հայր Ծուղուրեան հանգուցեալի անմահ յիշատակի մեծագոյն կոթողը նրա թողած անգնահատելի գործի մէջ տեսաւ։

Հայկ. Երաժշտական Ընկերութեան կողմից Վարդանեան, հանգուցեալ երաժշտագէտի յիշատակին յարգանքի խօսքեր ասելուց յետոյ, յայտնեց, որ Ընկ. վարչութիւնը առաջին իսկ պատեհ հանգամանքում կաշխատէ գլուխ բերել հանգուցեալի մահարձանի խնդիրը, դնելով մեծ երաժշտագէտի անուանը համապատասխան շիրիմ։

Հանգուցեալի մտերիմ ընկեր երաժիշտ Տէր-Դաւիթեան ջերմ խօսքերով ցաւ արտայայտեց, որ Եկմալեան բացի ձայների սքանչելի ներդաշնակութիւնից՝ անկարող եղաւ, հակառակ իր բուռն փափագի, ներդաշնակութիւն մտցնել նաև հայ խոցան սրտերում...

Հայր Զարդարեան զգացված յիշեցրեց, որ Եկմալեան հայկական քար իրականութեան զոհը դարձաւ. Եկմալեան ոչ թէ մեռաւ, այլ մեռցրին նրան...

Եւ վերջին խօսքերը շատերին վերյիշեցրին մօտիկ անցեալը, երբ, յիրաւի, Եկմալեանի կեանքը թունաւորվեց ու դառնացաւ հայկական սնոտ զրպարտութիւնների ու բամբասանքների ազդեցութեան տակ...

Տխուր սգահանդէսն աւարտվեց երգեցիկ խմբի քառաձայն «Հայր մերի» երգեցողութեամբ, որի վերջին հնչիւնները, ասես, միախառնվեցին Եկմալեանի անհանգիստ խռովեալ հոգու հետ...

Ժամը 2-ի մօտերը ծաղկազարդ թանգագին գերեզմանին հրաժեշտ տուինք մենք, թողնելով դարձեալ նրան մեր գործիչների պանթէօնում հանգչելու խաղաղ...

Ռեցենզենտ

«ԿԱՐՄԻՐ ՁՈՒ»

Այս անուան տակ քաղ. կենտր. կօմիտէն Զատկի տօներին կազմակերպելու է տօնահանդէսներ և հանգանակութիւններ։ Ստացվելիք զուտ արդիւնքը մտնելու է քաղ. կենտր. կօմիտէի դրամարկղը։

Մարտի 6-ին, եր. ժ. 8-ից դումայի նիստերի դահլիճում Ա. Գ. Ալիղանովի նախագահութեամբ կայացաւ «Կարմիր ձու» անուան տակ տօնահանդէսները կազմակերպող յատուկ յանձնաժողովի նիստը։ Այդ յանձնաժողովը, ինչպէս յայտնի է, ընտրվել էր քաղաքային կենտրօնական կօմիտէի վերջին նիստում։

Որոշվեց Զատկի առաջին օրը (մարտի 22-ին) ցերեկվայ ժամը 1-ից մինչև երեկոյեան ժամը 6-ը Արտիստական Ընկերութեան համերգային դահլիճում կազմակերպել «Զատկական ռաուտ»։ Պետական, կառավարչական, քաղաքային և միւս հասարակական հիմնարկութիւնների ներկայացուցիչների համաձայնութեամբ, «Զատկական ռաուտը» կը փոխարինէ սովորական զատկական այցելութիւններին։ Դահլիճի մուտքին ռաուտի այցելուները կը տան իրանց լուման յօգուտ պատերազմից վնասվածների, իսկ դահլիճում արդէն կանեն իրանց սովորական շնորհաւորութիւնները։

Մտադրութիւն կայ համերգային դահլիճում բաց անել «զատկական սեղան», որից ուտել ցանկացողները նախօրօք արկղի մէջ պէտք է գցեն իրանց լուման։

Յանձնաժողովը ցանկութիւն է յայտնում Թիֆլիսի երկու սեռի հասարակութեանը՝ հրաժարվել Զատկի առիթով արվելիք տնային այցելութիւններից և փոխարինել այդ մի օրվայ այցելութիւնով՝ «Զատկական ռաուտով»։

Այնուհետև՝ բաց են թողնվելու յատուկ «շնորհաւորական բացիկներ», որոնք կը վաճառվեն բոլոր պետական և հասարակական հիմնարկութիւնների մէջ։

Ժողովրդական Տանը, ինչպէս և Արտիստական Ընկ. թատրոնում կը կազմակերպվեն ցերեկոյթներ և երեկոյթներ։

Զատկի շաբաթվայ մէջ տեղիս ակումբների մէկի ամառային շէնքում կը լինի մեծ զբօսանք։

Յանձնաժողովի յաջորդ նիստը տեղի կունենայ այսօր, մարտի 10-ին, երեկ. ժ. 7-ին դումայի նիստերի դահլիճում։ Այս նիստին մասնակցելու հրաւիրված են Կենտրօնական Կոմիտէի անդամները և «Ծննդեան տօնավաճառ» կազմակերպող անձինք. կը մշակվի «Կարմիր ձուի» մանրամասն ծրագիր։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԹԻՖԼԻՍ

◆ Կովկասի քաղաքների միութեան բիւրօն 5 արկղ զատկական ընծաներ է ստացել կովկասեան ռազմաբեմի զօրականներին բաժանելու։

◆ Երկրագործութեան կովկասեան վարչութիւնը իր ծախքով հիմնում է մի հիւանդանոց 20 մահճակալով, որը տեղաւորվելու է ս. Նինայի անուան դպրոցի շինութեան մէջ, ուր տեղաւորված է նաև վրաց լազարէթը վիրաւոր և հիւանդ զօրականների համար։

◆ Սեվաստոպոլի հեռագրի առիթով, Թիֆլիսի ազնուականների պատգամաւորական միութեան մէջ գումարւում եղաւ, որին մասնակցում էին վրաց ազնուական և կուլտուրական ու լուսաւորական հաստատութիւնների ներկայացուցիչները։ Ժողովը միահամուռ զայրոյթ է յայտնել Սեվաստօպոլի հեռագրի առիթով և առանձին պատգամաւորութիւն է ընտրել, յանձնարարելով նրան ներկայանալ բարձր իշխանութեան և խնդրել, որ հերքվի այդ հեռագիրը։

◆ Քաղ. կենտրօնական հիւանդանոցի ծառայողները միջնորդել են քաղ. վարչութեան առաջ իրանց ռոճիկը աւելացնելու մասին։ Նրանք իրանց պահանջը պատճառաբանում են կեանքի թանգութեամբ և ժամանակակից այլ հանգամանքներով։

◆ Անցած ուրբաթ կայացաւ դումայի իրաւաբանական յանձնաժողովի նիստը՝ մասնակցութեամբ քաղաքագլխի, քաղ. վարչութեան անդամների և հրաւիրված անձերի։

◆ Թիֆլիսից մեկնեց Պետական Դումայի նախագահի օգնական Վարուն-Սեկրէտը, ուղևորվելով Բաթումի շրջանը։

◆ «Тиф. Лис.»-ը հաղորդում է, որ այն գերմանահպատակներին, որոնց պատերազմի սկզբում թոյլատրված էր մնալ Թիֆլիսում, այժմ բոլոր առաջարկված է, որ իրանց գործերը վերջացնեն մինչև ապրիլի 1-ը։

◆ Մսագործները ահա երեք օր է միս չեն մորթում, կամ մորթում են շատ քիչ։ Նրանք կամենում են, որ մսի սակագինը դարձեալ աւելացվի։ Երէկ այդ պատճառով ոստիկանապետը ձերբակալեց 6 մսագործի։

◆ Մեզ խնդրում են յայտնել, որ Նպաստամատոյց Ընկերութեան օգտին յօգուտ գաղթականների կայանալիք համերգի առիթով երգեցիկ խմբի փորձերն այսուհետև տեղի են ունենալու պ. Գ. Միրզայեանի ղեկավարութեամբ Գրական-Գեղագիտական Սալօնում (Գօլովինսկի 41), շաբաթ օրվանից ամեն օր, երեկ. ժ. 8-ից։ Խնդրվում է երգիչ-երգչուհիներին աջակցել խմբի կազմը լրացնելու ցանկացած քանակով։

◆ Մեզ հաղորդում են Էջմիածնից հետևեալը. «Եգիպտոսից Պօղոս Նուպար փաշան նորից փոխադրել է Ամենայն Հայոց Կաթողիկոսին 10,000 ր. փախստականների համար։ Սրանով նա փոխադրել է 20,000 ր. անմիջապէս Վեհափառին, իսկ 20,000 ր. ևս փոխադրել է Թիֆլիս Մեսրոպ եպիսկոպոսին, բայց յետոյ հեռագրել է նրան այդ գումարն ևս տալ Վեհափառի տրամադրութեան ներքոյ։ Սակայն կաթողիկոսական դիւանատան պահանջը՝ ուղարկել այդ գումարը՝ մնացել է ցարդ անկատար, թէև կատարված էր Կաթողիկոսի անունով։ Թիֆլիսի Կենտրօնական Կոմիտէտը, որի նախագահն է Մեսրոպ եպիսկոպոսը, այդ գումարը Կաթողիկոսին չը յանձնելու համար, դիմել է մի ծիծաղելի միջոցի. նա զեկուցել է Կաթողիկոսին, թէ իր կատարած ծախսերից 20,000 ր. այդ գումարով է ծածկել, մինչ ծախսերը կատարվել են նախ քան այդ գումարի ստացումը և մինչ նա իր դրամարկղում այժմ ևս ունի 50,000 ր.։ Վեհափառը, անհիմն համարելով այդ առարկութիւնը, հրամայել է խստիւ պահանջել գումարը։ Ցաւալի է, որ անկարգապահութեան օրինակը տալիս է մի եպիսկոպոս, որ առաջինը պէտք է լինէր կարգապահութիւն պահպանողը։

ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ., ԳԵՂԱՐ.

ՊՐՕՖ. Կ. ԱՂԱՋԱՆԵԱՆԻ ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆԸ

—

Նպաստամատոյց Ընկերութեան նախաձեռնութեամբ, կիրակի, ամսիս 8-ին, Արտիստական Ընկ. դահլիճում Վարշավայի համալսարանի պրոֆ. Կ. Աղաջանեանը ռուսերէն լեզուով կարդաց մի դասախօսութիւն «Բանաստեղծական և զառանցային գաղափարների և մասսային պսիխոզների» մասին։

Յարգելի պրոֆեսորի դասախօսութիւնը թէև զուտ մասնագիտական էր, բայց շատ հետաքրքրական և շահեկան էր ունկնդիր հասարակութեան համար իր բազմաթիւ նորութիւններով՝ խելագարների և ցնորվածների կեանքից։

Խօսելով զառանցային գաղափարների մասին, յարգելի պրոֆեսորը այդ գաղափարները բաժանեց մի քանի տեսակների, այն է՝ հալիւցինացիայի, կեղծ հալիւցինացիայի, յեղաշրջված յիշողութեան և կեղծ յիշողութեան։

Հալիւցինացիան իլլիւզիայից քիչ տարբերութիւն ունի։ Կան մարդիկ, որոնց հալիւցինացիան նման է իլլիւզիայի։ Հալիւցինացիան աւելի շատ ունենում են էպիլեպտիկները (ընկնաւորները), արբածները և այն մարդիկ, որոնց ուղեղը շատ է գրգռված։ Դրանց թւում է, թէ մարդիկ իրանց կանչում են, յատակից, առաստաղից շարունակ ձայներ են լսում. զգում են, թէ իրանց մօտ մարդ կայ, հետը խօսակցութիւն են սկսում և զառանցում են այնպիսի բաների մասին, որոնք իրանց հետ կապ են ունեցել կամ երազել են նրանց մասին։

Կան մարդիկ, որոնք հալիւցինացիան տեսնում են աչքերով, իսկ կան այնպիսիները, որոնք այդ զգում են հոտով, մարմնով։ Այս վերջինը կոչվում է կեղծ հալիւցինացիա։

Յեղաշրջված յիշողութեան տէր մարդիկ իրանց համար սովորութիւն են դարձրել անցած հին տպաւորութիւնները յիշել նորից։ Եւ այդ ամենը, պէտք է ասել, նրանք յիշում են ամենայն պարզութեամբ։

Կեղծ յիշողութիւն ունեցող մարդիկ սովորութիւն ունեն խօսել այն բաների մասին, որ չեն եղել, չեն պատահել իրանց կեանքում, բայց երբևիցէ այդ բաները մասնակի կերպով անցել են նրանց գլխով։

Ցնորական գաղափարների տէր մարդիկ զգում են, որ իրանց հետևում են, հալածում և միշտ երկիւղի մէջ են լինում։ Նրանք զգում են, որ իրանք մեծ մարդիկ են, իշխաններ և այլն։

Այդպիսի մարդկանց մէջ արդէն չքացել է ինքնաքննադատութիւնը, ինքն իրան հաշիւ տալու բնազդը, որ ունեն նորմալ մարդիկ։

Բոլոր ցնորական գաղափարները արդիւնք են հալիւցինացիայի։

Այս ամենից բացի կան և ուրիշ տեսակի մարդիկ, որոնք հեռաւոր կապ ունեն զառանցային գաղափարներ ունեցող մարդկանց հետ։

Դրանք մանիակներն են, որոնք լինելով ցրված մտքի տէրեր, շարունակ իրանց բռնած նիւթը թողնում են և խօսում բոլորովին հեռաւոր անկապ բաների մասին, կամ թէ չէ նմանեցնում են իրանց այս կամ այն մարդու ձևերին։

Թուլամիտները աւելի հեռու են գնում։ Խօսակցութիւն սկսելով, դիցուք, երկաթուղու արդիւնաբերութեան մասին, նրանք անզգալիօրէն հեռանում են նիւթից և խօսում են կանանց մանիակների տեսակների մասին։ Երկաթուղու արդիւնաբերութիւնից—մանիակներ։

Այսպիսի մարդիկ, բացի թուլամտութիւնից, ունեն և տրամաբանութեան բացակայութիւն։

Իր գեղեցիկ դասախօսութիւն-տեսութիւնը յարգելի պրոֆեսորը համեմեց բազմաթիւ օրինակներով, որոնց ինքը ականատես է եղել թէ համալսարանի կլինիկայում և թէ կեանքում։

Բուռն ծափահարութեան տակ վերջացաւ հետաքրքրական դասախօսութիւնը, որին դժբաղդաբար լսելու էր եկել ոչ այնքան մարդ, որին արժանի էր նա։ Ս. Ր.

Ս. ԹԱՌԱՅԵԱՆԻ ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆԸ

—

Ուրբաթ, մարտի 6-ին, Կայսեր. Երաժշտական Ընկ. դպրոցի դահլիճում պ. Ս. Թառայեան դասախօսեց «Կնոջ կոչումը» նիւթի մասին։

Իր դասախօսութեան մէջ պ. Թառայեանը շօշափեց կնոջ դաստիարակութեան, մայրութեան և տնտեսուհի լինելու խնդիրները, տալով պարզ և մատչելի լուսաբանութիւն։

Կանգ առնելով կանանց հարցի վրա, պ. դասախօսը այն կարծիքը յայտնեց, որ կանանց ուզած տղամարդկանց հաւասար իրաւունքները՝ սխալ են. կանանց պէտք է տալ բոլոր իրաւունքները հասարակական ասպարէզներում, իսկ տղամարդիկ կարող են հասարակական գործից դուրս պարապվել տիեզերքի ուսումնասիրութեամբ, նրանք կարող են ուսումնասիրել օդը, ջուրը և շատ [illegible] երևոյթներ։ Կնոջը պէտք է տալ տան, տնտեսութեան և երեխաներին վերաբերող բոլոր իրաւունքները, իսկ տղամարդը կարող է միայն կերակրող և պահպանող լինել։ Բոլոր իրաւունքները կանանց պէտք է տալ նաև շատ նկատումներով։

— Եթէ,—ասաց պ. Թառայեան,—գերմանական ռայխստագում 29 կին լինէր, պատերազմ չէր յայտարարվի, որովհետև ոչ մի մայր չի ցանկանայ, որ իր զաւակը կռւի գնայ։

Իր բոլոր ասածները հաստատելու համար պ. Թառայեան մէջ բերեց շատ օրինակներ թէ պատմական և թէ ժամանակակից կեանքից և հիմնաւորեց իր՝ կնոջ կոչման մասին ունեցած տեսակէտը։

Դասախօսութեան վերջում եղաւ մտքերի փոխանակութիւն, աւելի շուտ՝ զրոյց։ Տրված հարցերին պ. դասախօսը պատասխանեց մի առ մի, մատչելի օրինակներով։

Երաժշտական դպր. դահլիճը գրեթէ լիքն էր ունկնդիրներով։ Ունկնդիրները, հազւագիւտ բացառութեամբ, բոլորն էլ դեմօկրատ և բանւոր դասակարգից էին։

Այս հանգամանքի վրա շեշտում ենք այն պատճառով, որովհետև նկատելի է, որ մեր ժողովրդի այդ դասը սկսել է հետաքրքրութիւն ցոյց տալ դէպի հասարակական և ընտանեկան հարցերը։ Եւ թւում է թէ նա ծարաւի է ինչ-որ մի բանի։

Եւ այս շատ ուրախալի է։ Ս. Ր.

ՁԱՌԱՄԵԱԼ ԴՐՈՒԹԻՒՆԸ, արտէրիօսկլէրօզը, յոգնածութիւնը, հիւանդութիւնների հետևանք ընդհանուր թուլութիւնը, ալկօհօլիզմի հետեւանքները եւ այլն, նէվրաստէնիան եւ ջղային հիւանդութիւնները, սեռական թուլութիւնը, հիւծուածութիւնն ու նիհարութիւնը մեծ աջողութեամբ բժշկւում է Սպէրմին-Պէլը, որի մասին վկայում են աշխարհիս ամենայայտնի բժիշկների բազմաթիւ դիտողութիւնները գրականութեան մէջ։

Սպէրմին-Պէլը միակ իսկական, բազմակողմանի փորձված Սպէրմինն է. այդ պատճառով պէտք է ուշադրութիւն դարձնել „ՍՊԷՐՄԻՆ-ՊԷԼԻ" անուան վրա և չը գնել կեղծվածները, հեղուկներ և սերմային գեղձերից պատրաստված մահլամներ, որպէս անպէտք նմանողութիւններ, որոնք թէ յատկութեամբ և թէ ներգործութեամբ Սպէրմին-Պէլի հետ ոչ մի առնչութիւն չունեն և յաճախ պարունակում են առողջութեան համար վնասակար տարրեր։

Ցանկացողներին ուղարկվում է ձրիաբար «Цѣлебное дѣйствіе Спермина» գիրքը. ամբողջ օրգանոտէրապիայով հետաքրքրվողներին ուղարկվում է՝ 4 հատ 7-կոպէկանոց նամականիշ ստանալուց յետոյ՝ նոր լոյս տեսած «Цѣлительныя силы организма» գիրքը։

Սպէրմին-Պէլին կայ ամենուրեք.

Профессоръ Д-ръ Пель и С-вья
С-Петроградъ.
Մատակարար ՆՈՐԻՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՄԵԾ. Դրան

12—3 (П. 2965) № 2

ԳՐԱԿԱՆ-ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ՍԱԼՕՆՈՒՄ

—

Մարտի 6-ին, Սալօնի հերթական երեկոյթին խօսեց պ. Գէորգեան «Հայ-թիւրքական յարաբերութիւնները Թիւրքիայում և օսմանեան օրէնքները» նիւթի մասին։

Խօսելով թիւրքական սահմանադրութեան մասին, նա այդ սահմանադրութիւնը անուանեց՝ զինուորական յեղափոխութեան հետևանք։

Սահմանադրութիւնից յետոյ հայերի վիճակը միանգամից սկսեց լաւանալ, թիւրքերը եղբայրական զգացումներ ցոյց տուին, սակայն դրանից յետոյ սկսվեց հակահոսանք և թիւրքերի վերաբերմունքը փոխվեց, որի հետևանքը եղաւ Ադանայի ջարդը։ Մի խօսքով՝ հայերը խոր հիասթափութիւն կրեցին։ Այդ բանում աւելի մեծ դեր խաղացին քաղաքական կուսակցութիւնները։ Բացասական նշանակութիւն ունեցան և հայ կուսակցութիւնների ներքին կռիւներն ու պառակտումները։

Իսկ այժմ հիասթափված և բազմաթիւ սարսափների ենթարկված հայութիւնը կանգնած է պատմական մի խոշոր անցքի առաջ՝ լի անակնկալութիւններով ու յոյսերով։

Դասախօսութիւնից յետոյ եղաւ զրոյց։

Ժողովին նախագահում էր բժշկ. Բ. Նաւասարդեան, քարտուղարն էր Հ. Համբարձումեան։

Խմբագիր-հրատարակիչ՝
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

Печатать дозволено военной цензурой.

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ՏԻՐԱԺ

II փոխառ. խաղարկու. տոմսերի

1,480	26	200,000	1,794	4	1,000
14,735	9	75,00	14,932	20	»
12,675	49	40,000	6,846	26	»
17,585	1	25,000	1,894	15	»
7,672	6	10,000	294	8	»
7,436	44	»	15,510	1	»
17,022	35	»	15,584	31	»
5,338	24	8,000	12,061	4	»
16,674	42	»	12,932	33	»
17,227	39	»	18,813	13	»
18,633	42	»	18,933	31	»
10,699	50	»	1,216	30	»
9,712	17	5,000	8,174	4	»
19,390	16	»	7,799	49	»
16,802	19	»	9,389	38	»
13,235	48	»	3,087	42	»
5,701	45	»	2,642	9	»
6,051	24	»	8,831	16	»
19,998	43	»	9,414	5	»
18,340	40	»	12,752	17	»
16147	25	305	43	8888	27
15378	15	16775	31	10305	10
5657	34	6091	42	11041	10
3428	12	15971	8	3939	9
16341	29	15457	32	1379	19
8037	28	7979	49	11641	15
8169	3	17873	17	7687	48
14449	6	348	40	11916	8
660	46	15412	10	9544	33
11795	19	16570	37	10828	49
17023	14	13075	18	11073	42
16317	24	8245	26	7433	21
3549	13	8206	45	19315	36
11036	18	13493	48	11791	49
14353	60	16713	1	19972	38
17866	8	18641	32	15655	16
13882	19	12341	22	15810	12
19565	48	5873	25	9049	34
18762	28	14959	5	8589	25
12117	48	1412	5	7209	11
14883	25	4800	33	13205	12
16253	13	5774	32	18328	9
865	47	6572	20	7963	29
7429	34	19587	41	1133	22
4007	1	4108	60	2533	50
39	32	13268	39	13174	8
12921	6	6220	40	18145	44
11614	44	6830	24	10064	18
6713	1	11140	20	9048	35
12382	30	11878	9	14413	42
8654	47	19453	26	897	14
19777	43	6712	13	10814	37
13321	31	14335	24	15259	48
8250	3	16493	36	11195	10
11110	12	15527	30	15335	28
7311	7	10151	45	8294	22
11474	34	4314	37	15597	5
12499	46	6763	19	11040	18
11853	19	6246	19	18375	39
8620	8	13362	32	2750	11
14649	29	9011	39	3247	43
13725	5	13903	33	5747	9
14100	28	11050	11	6509	33
19295	12	16267	43	18644	48
16095	41	6218	33	6047	9
16374	10	5003	40	14336	5
17289	46	15062	29	2390	21
1120	33	3705	27	7703	21
14273	26	9732	30	1449	41
11572	40	17443	13	18367	10
19777	5	1033	35	6413	43
5152	40	9606	25	4083	10
17309	42	4774	48	15279	24
16780	31	11792	29	5638	49
10498	24	2865	7	3850	26
6879	1	5362	29	10149	22
4286	8	11339	30	16350	4
837	26	19023	10	11933	28
2117	50	10283	8	5692	2
11352	42	11036	32	9124	30
17781	15	1095	22	15065	5
12554	21	8328	34	5703	50
19715	17	15694	5	17848	41
17582	32	10349	5	7862	27
12788	34	2931	21	3900	45
17251	47	11003	17	14549	44
18299	46	16671	3	3409	39
2904	25	8631	7	15889	8
7350	31	8429	46	9791	5
17500	16	18402	22	11979	30
8192	42	13564	48	12138	11
8728	36	896	23	10917	49
16520	48	18311	38	1072	8
2079	18	1753	8	1593	30
9390	21	3413	43	3139	27
16901	12	18717	8	14017	3
6174	18	12090	2	3067	22
12103	3	8212	32	2044	29
4489	34	14612	36	1551	26
63	17	11304	45	13701	36
15011	35	18707	33	2694	3
19029	35	7695	46	6756	50
14738	4	4652	44	9360	21
3934	48	9218	3	3772	23
5040	27	14550	7	9705	41
7708	36	19403	23	11662	9
2932	13	6714	46.		

Հանված տոմսեր 10158
15036 16850 11124 9647 6119 1853 15525 1819
5942 656 8119 17684 14568 8840 547 5194 3180
667 11875 16382 837 725 1075 1789 8993 11019
5500 6316 4343 9428 8215 1855 8143 18295
4900 7227 2020 7897 5755 5564 3469 7877 9367
18076 4841 12382 6458 16305 162 16348 2175
4787 17277 10834 2667 18967 966 4313 15845
18829 14114 12225 5291 9065 2668 407 3713
11983 11726 100 8725 19161 11435 18698
16671 12200 9924 17031 4990 482 18072 11817
6626 4473 6453 8841 1133 11661 6914 8265
19710 18350 10521 11230 5878 758 4212 7219 435
16412 19387 3080 5771 15345 5010 4152 4329
18587 2330 7409 8553 18736 1847 16326 15364
2224 16753 16736 13566 11292 18146 15263
11489 8294 14777 3280 11598 7679 11620
17042 14721 921 10489 14733 11132 10803
15331 1250 803 1776 17439 12801 16175 8766
10362 11243 17713 9387 16284 7713 9331
6086 10890 4355 16683 1521 761 18340 14881
9095 18935 9769 13585 14335 4455 12493 6777
12711 257 982 2372 15721 12575 526 13362
10897 14973 721 18393 6645 13280 13603
15461 9646 12227 12871 16999 13521 10559
15267 8230 7447 158 7307 11404 7466 5025
15289 17319 7714 1044 14882 4465 9162
19206 2638 19228 11304 14341 354 7336 3041
1988 1020 14566 12264 9794 4279 6747 6933
7283 11168 12736 18100 19002 4729 12392
12158 16577 7583 19532 9603 10352 19724 7328
5641 12630 19114 2881 18290 10174 11482
14004 17022 4078 11768 18472.

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

(Թիֆլիսի ժամերով)

—

ԹԻՖԼԻՍԻՑ ՄԵԿՆՈՒՄ Է՝

№ 3 դէպի Բաթում 1 ժ. 45 ր. ցերեկ.
№ 4 » Բագու 7 ժ. 3 ր. երեկ.
№ 6 (արագ) » 12 ժ. 8 ր. ցերեկ.
№ 9 » Բաթում 8 ժ. 53 ր. երեկ.
» Ջուլֆա 10 ժ. 23 ր. երեկ.
» Բորժոմ 3 ժ. 20 ր. ցերեկ.

ԺԱՄԱՆՈՒՄ Է ԹԻՖԼԻՍ՝

№ 3 Բագուից — 12 ժ. 54 ր. ցերեկ.
№ 4 Բաթումից — 5 ժ. 55 ր. երեկ.
№ 5 Բագուից (արագ) 7 ժ. 41 ր. երեկ.
№ 10 Բաթումից — 9 ժ. 51 ր. առաւ.
Ջուլֆայից — 6 ժ. 53 ր. առաւ.
Բորժոմից — 7 ժ. 25 ր. առաւ.

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
Բժշկ. Բ. Նաւասարդեանի
Հիմնված 1880 թ.
(Պուշկինի, Վօրոնցովի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից
«606»-ի և «914»-ի ներարկում բժշկական խորհրդակցութեամբ՝ առ. 11—12 ժ.
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ
Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան վեներական (սիֆիլիս) հիւանդութիւն.
Բ. Գ. ԱՂԱՍԱՐԵԱՆ—9½—2 ժ. ներքին, ջղային երեխայոց հիւանդութ. և [illegible].։
Մ. Մ. ԲԵՆԻԱՄՕՎԻՉ—11—12 ժ. ականջի, կոկորդի քթի հիւանդութ.։
Ա. Գ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—12—1 ժ. երկշ. հինգշ. և շաբաթ. երեխայոց ներքին և հիւ. և [illegible].։
ԿԻՆ-Բ.ԺԻՇԿ ՏԷՐ-ԲՕՒՐԹԵԱՆ—12—1 ժ. մանկաբարձութիւն և կանանց հիւ.։
ԵՐԵԿՈՆԵՐԸ
Մ. Մ. ԲԵՆԻԱՄՕՎԻՉ—6—7 ժ.
Վճարը 50 կ.։ Չքաւորները ձրի։ Համախորհրդի (կօնսիլիում) և օպերացիայի համար առանձին։
Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Բ. Նաւասարդեան
1. 0—40

ԲԺՇԿԱՊԵՏ
Գ. Ա. ՀԱԽՎԵՐԴԵԱՆ
նախկին օրդինատոր Պետերբուրգի սիֆիլ.-վեներ. կլինիկայի։ Ընդունում է հիւանդներին յատկապէս միզասեռային, վեներ., սիֆիլիսային հիւանդութեան. առաւ. ժամը 10—11 և երեկ. ժ. 6—8. Սեմեօնօվսկայա փող., № 18 (Վօրոնցովի արձանի մօտ)։ Բժշկի բնակարանը Սեմեօնօվսկայա, № 16.
(չ. ու. կ.) 1018. 100—42

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱԳԼՈՒԽԸ

յայտնում է, որ այն անձերը, որոնք ցանկանում են աշխատել պահեստի զինւորների ընտանիքներին խնամող Քաղաքամասային Հոգաբարձութիւնների մէջ, թող բարեհաճեն դիմել՝

I քաղաքամասում՝ Գ. Ն. ԿԵՑԼԻՆ (Կիրպիչնի պեր. 20) երեկ. ժամը 4—7-ը։
II » Ս. Գ. ԱԼԴԱԴԱՆՈՎԻՆ (Սուդեբնայա, 31) առ. ժ. 9—10-ը։
III » Պ. Մ. ԴՕԼՈՒԽԱՆԵԱՆԻՆ (Պասկեվիչա փող. 6)։
IV » Ս. Խ. ՍՈՒԼԽԱՆԵԱՆԻՆ (Սօլօլակսկայա, 8) առ. ժ. 10—3-ը։
V » ՀԱՍԱՆ-ՋԱԴԷԻՆ (Սուրբ-Սարգսի փ., 19) առ. ժ. 9—10-ը։
VI » ԿՎԵՋԵՐԵԼԻ-ԳՕՊԱՋԷԻՆ (Կախետինսկայա, 22) առ. ժ. 9—10-ը։
VII » Զ. Ն. ՋՈՐԵԱՆԻՆ (Կախետինսկայա, 21) առ. ժ. 8—10-ը։
VIII » Ս. Ա. ՄԻՆԷԵՎԻՆ (Փետրվարի 19-ի փող., 53)։
IX » Գ. Պ. ՄԵԼԻՔ-ՂԱՐԱԳՅՕԶԵԱՆԻՆ (Զերբեզովսկայա, 59)։
X » Ս. Ա. ԿՍԱՎԵՐԻԵՎԻՆ (Պալօվսկայա, 7)։
XI » Ա. Ն. ԷՆՖԻԱՋԵԱՆՑԻՆ (Վոկզալնայա, 8).
XII » Ն. Լ. ԽԱՐԱՋԵԱՆԻՆ (Մեչնիկովի փ. 11) ժ. 9—10-ը և 4—5-ը։

Քաղաքամասային Հոգաբարձութիւնների նպատակն է—անձնական աշխատանքով կամ տարեկան որոշ վճարումներով նպաստել պահեստի զինւորների ընտանիքներին օգնելու գործին։

Տեղական Հոգաբարձութիւնների վրա պարտաւորութիւն է դրված՝ ա) տեղական ռայօնի կարիքներն ուսումնասիրել և ցուցակագրել կարիք ունեցողներին. բ) ծանօթանալ այլ բարեգործական հիմնարկութիւնների հետ, որոնք գտնվում են հոգաբարձութեան շրջանում, միասին գործունէութեան նպատակով. գ) Հոգաբարձութիւնների մէջ գործողների թիւն աւելացնել ըստ կարելոյն աւելի շատ անդամներ, գլխաւորաբար տեղական շրջանի ազգաբնակութիւնից. դ) նուիրատւութիւններ հանգանակել Հոգաբարձութեան բարենպատակ գործերի օգտին. ե) տեղական շրջանի չունևորներին օգնութիւն ցոյց տալ. զ) աջակցել Քաղաքային Ուպրավայի ագենտներին որոշելու, տեղեկութիւններ հաւաքելու և նրանց օգնելու գործում. է) քննել այն հարցերը, որոնք կառաջանան Հոգաբարձութեան գործունէութեան ընթացքում Կանոնադրութիւնը գործադրելու դէպքում, և հարց զարթեցնել Ուպրավայի առաջ՝ փոխելու Կանոնադրութեան §§-ները նորերով։

139. 1—1

Բագուի Հայոց Կուլտուրական Միութեան Մելիօրատիվ Սեկցիան հրաւիրում է հմուտ ՎԱՐՊԵՏ կամ ՎԱՐՊԵՏՈՒՀԻ Սաղեան գիւղի (Շամախու գաւառ) Ջուլհականոցի համար։ Ռոճիկը 40 ռուբ. ամսական, ուտելիք և ծառայ։ Դիմել մինչև մարտի 9-ը Թիֆլիսում (Կսենիէվսկայա փ., տ. Գարսոյեվի) Սեկցիայի նախագահ Ալէքս. Պարոնեանին, իսկ մարտի 10-ից՝ Բագու, Կուլտուրական Միութեան գրասենեակը։ 136. 3—1

Типографія Канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ, Лорисъ-Меликовская улица, домъ казенный.